

Ungnet seeds  
Ungnet seeds 1912

891.99

U-66



ՅՈՒՆԵՍԿՕ  
Ս-66

NOV 2011

ՅՈՒՆԵՍԿՕ ՍՈՒՍԿՆԵՆ

# ՍԱԽԱՌՆՈՂ ՈԳԻՆ

Վ Է Պ

ԹԻՖՆԻՍ  
1912

*Հարկի Բարեկամ Այ. Գալսեֆե*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «Ա.Ր.Ր.» ԱՄՍԱԳՐԻ № 9

891-99  
U-66

*պ*  
ՏՈՂԱԿԻՄ ՍՈՂՈՎԵՐՆ *պ*

# ՍԱԻԱՌՆՈՂ ՈԳԻՆ

Վ Է Դ

63

1001  
3860

(Արտատպուած «Ա.Ր.Ր.» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ  
Տպարան «ԷՊՕԽԱ» Մուգէյսկի պեր. № 8  
1912



ներքին մի ձայն այլ բան է ասում... Թաշախուստները ետեւից ընկնես, ոչինչ չի գուրս գայ: Ուրիշ ելք: Օրինակ՝ ի՞նչ... Ո՛չ, ո՛չ. այդ միշտ էլ կարելի է գնալ վարժուհի դառնալ. բայց նա կոչում չունի: Միթէ մարդ իր սիրած գործին չպիտի նուիրուի: Ահա ձեզ հարիւրաւոր վարժուհիներ: Քոյրն էլ ամուսնացաւ ու սուցչի հետ, հէնց երկրորդ տարին ինտրիզներ, և այժմ նա տանտիկին է: Եւ ի՞նչ վախճան ունեցաւ: Ոչ, ոչ. նրան չի հետաքրքրում ո՛չ տանտիկին լինելը, ո՛չ վարժուհի դառնալը և ո՛չ էլ որևէ ծառայութիւն: Միթէ աղջկայ համար այլ ճանապարհ չկայ:

Եթէ նա ուզենար, շատ վաղուց կիրթար այդ ուղիով: Չգիտէ, ինչպէս ուրիշները, բայց նրա վրայ տղամարդկանց ուշադրութիւնը կենտրոնացել է դեռ այն ժամանակուանից, երբ նա 13 տարեկան էր և սովորում էր գիմնազիայի հինգերորդ դասարանում: Նա այն ժամանակ չէր կարողանում ըմբռնել, թէ ինչո՞ւ ամեն օր յաճախում է նրանց տունը քեռորդին և նրա հետ այնքան սիրալիր վարվում: Նա շատ սիրում էր ձեռքի լսփեղու խաղը: Մադլէնը մեկնում էր ձեռքը, քեռորդին հասցնում էր հարուածները. արիւնը տեղի էր տալիս, մատների տեղերը զօլ-զօլ մնում էին Մադլէնի լիք դաստակի վրայ... բայց Մադլէնը նորից պարզում էր ձեռը հարուածների տակ, նորից բարձրանում և իջնում էր քեռորդու ձեռքը, այս անգամ աւելի ուժեղ թափով, աւելի յարձակողական դիրքով...

Պատահում էր, որ Մադլէնը վերջացնում էր դասը, անցնում էր երգելով իր սիրած փոքրիկ սենեակը, մօտենում էր պատուհանին. քեռորդին գրկում էր նրան. Մադլէնը թէև զգում էր մի անսովոր յոյզ, սակայն ընազդմամբ խուսափում էր. քեռորդին վազում էր ետեւից, նորից բռնում, առնում գիրկը, մօտեցնում էր նրա այլայլուած երեսը իր երեսին... Իսկ մէկ օր— Մադլէնը այդ չի մոռանայ—մի կատարեալ արշաւանք

մղեց Մադլէնի շրթունքների դէմ և... համբուրեց քաշաբար, Իսկ երբ վերջին դասարանում՝ առաջին անգամ հագաւ երկար դերիա, ծերունի տեսուչը նոյն իսկ նրա երկու ձեռքից բռնեց և պտտեց նրան:

— Ինչպէս էք մեծացել, — բացազանչեց նա. — լաւ է, լաւ. ձեզ շատ սաղում է. հիմա... հիմա պիտի ամուսնանալ...

Նրա խոշոր, սևորակ աչքերը բուռն կերպով վառուեցին, ըստ երևոյթին նա էլ հրճւում էր այդ սիրալիութիւններով, բայց ամուսնանալ... Նա 15 տարեկան էր և խելքն ու միտքը գրել էր երգեցողութիւն սովորելու վրայ:

Իսկ հանգամանքները շատ ծանր էին: Հայրը ջութակահար, մայրը մեռած, հարսանիքներից, երեկոյթներից հօր ստացած վարձատրութիւնը չէր բաւականանում տան կարիքներին: Հայրը կերակրում էր երկու աղջկան և եթէ կարողացաւ նրանց մտցնել գիմնազիա, այն էլ բարեգործական ընկերութեան միջոցով: Ահա կաւարտէ ձեր աղջիկը, ձեզ կը համնէ: Գիտէ՞ք դա ի՞նչ է նշանակում. նորաւարտը պէտք է օգնէ ընտանիքին: Եւ շատ-շատ են այդ կողմը շեշտում: Երկու օր առաջ տրամբօնիստը նոյն իսկ նրան նկատեց և ուղղակի ասաց.

— Բախտաւոր ես, Մարգիտ, լաւ աղջիկ ունես...

Եւ Մարգիտը նկատեց, որ տրամբօնիստի ձայնը այս խօսքի վրայ երեբաց:

— Ես լսեցի, որ աղջկադ ուզում են... Լաւ է, լաւ է, սիրուն աղջիկ ունենալը այդպէս է: Ա՛յ, կը տաս մի հարստի, ջութակդ էլ դէն կը շարտես... Թէ չէ, ի՞նչ է սա, գիշերները անքուն քերէ ու քերէ ջութակիդ լարերը...

Տասն էլ շատ է ասում: Հէնց որ դայ տուն, խօսքը նոյն խնդրի շուրջն է: Ի՛նչպէս, դու է՞լի ուղում ես սովորել. մի՞թէ չաւարտեցիր, վկայական չստացար. չեմ հասկանում... Ի՛նչպէս. ե՞րբ, ակտրիսա՞. բե՛մ... ա՛ջն ու խաչը ինձ հետ: Դու ո՞ւմ ես դուրս եկել, մեր ցեղում այդպիսի մէկը չի եղել. հօրդ ես քաշում... Խելքիդ տէրութիւն արա, փող, օժիտ չունես, բայց դէ՛մք, ուսում ունես. վեր կնց, գնա՛. հօրդ աշխատանքի վրայ քանի մնաս:

Բայց նա մեղաւոր է մի՞թէ, որ չի կարողանում մտքից հանել երգը... Ի՛նչպէս անել, եթէ նա այդ ձայնը չունենար... Չէ, ասացէք, ի՛նչ անել: Եւ երբ նրան ասում են, թէ դուք ձայն ունէք, նա չի կարողանում չհամաձայնուել այդ կարծիքի հետ: Ծիշտ է, ինքը սկզբում թերահաւատութեամբ էր վերաբերվում իր ձայնին, բայց նրան լսել են յայտնի երգիչներ, երգչուհիներ. ամենքը, ամենքը միաբերան խորհուրդ են տուել մշակելու: Յայտնի երգչուհիներից մինը նոյն իսկ նամակ է տուել: Այդ էլ հօր հեռատեսութեան հետեանք էր՝ «գուցէ սպագայում պէտք կը դայ»: Այդ բոլորից յետոյ... Ո՛չ, ո՛չ. նրա ոյժից բարձր է, նա չի կարող չփայփայել այս միտքը:

«Հօրդ հացի վրայ ես...»: Բայց հայրը նրան բան չի ասում. ընդհակառակը, նա չի թողնում ոչ մի պաշտօնի: Որքան չցանկանայ, այնու ամենայնիւ աշխատում է, որ աղջիկը սովորէ... Մի կերպ նոյն իսկ աշողեցրել էր երաժշտական դպրոց: Մաղլէնը պարապել է երկու տարի... Բայց նրան մեղադրում են... Ա՛խ, Տէր Աստուած, ձեզ ի՛նչ: Ի՛մ հայրը չի ստիպում, իսկ ինձ այդ դուր է գալիս... Յետոյ, դուք ինչո՞ւ էք իմ դատաւորը հանդիսանում... Ինքնակոչներ: Բայց ամսօտս նրա ուսուցչին տեղափոխեցին: Նորի մօտ Մաղ

լէնը չմնաց: Դա փորձում էր ձայնը այլ շփոխյով: Եւ Մաղլէնը թողեց երաժշտական դպրոցը: Նրան խորհուրդ տուին մտնել ուղղակի կօնսերվատօրիա, այն էլ անպայման Պարիզի, հնար չեղած դէպքում միայն գնալ Պետերբուրգ:

Իր շրջապատողների և ազգականների մէջ նա աւելի շատ սիրում է հօրը, այն մարդուն, որ շարունակ տքնում է, գիշերները անքուն մնում և ուրիշներին դուրձացնում, և շարունակ քաշուած, միայնակ: Բայց նա 40 տարին նոր է լրացրել, մի՞թէ նրա հայրը պիտի մնայ այսպէս աշխարհից հեռացած: Նրան անբախտ կեանք է վիճակուել, վաղ զրկուել է կնոջից. նրա մազերի մէջ դեռ մէկ սպիտակ ալիք չկայ, և օրիորդներից շատ-շատերը—նա լսել է անձամբ—ասել են՝ «Հայրիկդ ինչ լաւ մազեր ունի...»: Մինչդեռ հայրիկը միայն ջութակը գիտէ. դրանով մեծացրել ու կրթել է իր աղջիկներին... Ծիշտ է, նա նորերս մի վերաբերու է գնել, բամբակի վրայ, հաստ վերաբերու, բայց այն էլ պարտքով. եթէ չհամաձայնէին մաս-մաս վճարելու պայմանին, հազիւ թէ կարողանար ձեռք բերել այդ արտօնութիւնը. անցեալ ձմեռ, օրինակ, երես-աստառ վերաբերուով էր մնացել: Այս սեղօնին նրա թատրօն ընդունուելը դոնէ այդ միջոցը տուաւ: Բացի այդ վերաբերուից նոր ոչինչ չունի, մէկ էլ զզզուած աստառով սև սերտուկ, որ նա հագնում է թատրօն գնալու ժամանակ: Առանց սերտուկի մնալ նա չի կարող. նա առաջին ջութակն է նուագում, պէտք է սերտուկով լինի. այդ է պահանջում երաժշտական էտիկան: Շատ անգամ ճաշին հացից, թէյից դատ ոչինչ չի ունենում, բայց իր անունը հպարտութեամբ է կրում և երեսի վրայ արուեստագէտին յատուկ արտայայտութիւնը միշտ պահպանում:

Երգեցողութիւնը, երգը մի ամբողջ աշխարհ է Մաղլէնի համար... Հնա, նա էլի յիշեց... Հարկաւոր է ունենալ դաշնամուր... Երգիչն առանց դաշնամուրի... Մինչև օրս հայրիկը ջութակով է շտկում նրա նօտաները, բայց նա պէտք է ինքը անձամբ կարողանայ նուագել: Ա՛յ, այդպէս, նա ստեղծում էր ներքին կը դարնէ, երբ կուենայ դաշնամուր... Օ՛, նա շատ է ուզում ունենալ դաշնամուր... Եւ նա երգչուհի, դաշնամուր, իսկական երգչուհի... Եթէ միայն տան նրան միջոց մի երկու տարի կատարելագործուելու, այն ժամանակ կը տեսնէիր, թէ նա ինչպիսի գրամատիկ-սօսաբան է...

Երբեմն նրա մտքերը շատ հեռու են թռչում: Նրան թւում է, որ անս մէկն ու մէկը բարերար է կանգնել: Սա բաւական լուրջ մարդ է, ինքը արուեստասէր, հարուստ... Մաղլէնը խնդրում է նրանից դոնէ երկու տարուայ միջոց, գէթ փոխառութեամբ:

Նրա առաջ բացվում է Պետերբուրգի կօնսերվատօրիայի մեծ դահլիճը, կապոյտ, աստղալից օճոտքով, չորս հրաշագեղ կոյսերի նկարներով, երաժշտական ստեղծագործողների՝ Չայկովսկիի և Ռուբինշտեյնի հիանալի արձաններով: Այդպէս են նկարագրել նրան Պետերբուրգի կօնսերվատօրիայի դահլիճը, մուտքը:

Եւ այստեղ է, որ թագաւորում են և արտայայտվում գեղեցիկ ելիէջներ, նիւանսներ, ձայներ—և այդ՝ անընդհատ, անընդհատ—և շոյում նրա լսելիքը՝ ինչպէս սոխակների գիւթիչ գայլայիկները անտառի մէջ:

Իր տուալիտի սեղանի պլիսին Մաղլէնը նոյնպէս կպցրել է մի քանի պօստ-քարտեր... Ահա այս մէկը՝ յայտնի երգչուհի է: Նա դէմ գնաց հօր-մօր ցանկութիւններին. ծնողները դէմ էին իրանց աղջկայ երգելուն... Երգչուհին թողեց... և մի քանի տարի... Այսօր կայսերական բեմի վրայ է հասկանում էք, յայտնի տաղանդ... Ահա ձեզ...

Ներս մտաւ տատը:

— Այդ ի՞նչ է, տատիդ ձեռն էլ չես գալի համարուելի՞ս:

Մաղլէնը ցնցուեց:

— Տատիկ, դուք է՞ք. չտեսայ...

— Ինձ չտեսար, ոչ ի՞նչ... Բայց էքուց-էլօր սկսուերդ կը պահանջէ...

— Իրա համար էլ մարդու չեմ գնում... Ի՞նչ զգոյշ եղէք. հայրիկը բնած է...

Մութը վրայ կոխեց. ճրագները վառեցին. ձիւն է գալիս:

Մաղլէնը հագնվում է:

— Ո՛ւր ես գնում:

— Թատրօն:

— Մենակ...

— Այն: Հայրիկ, գալի՞ս էք:

— Բայց ես թատրօնից հարսանիք եմ հրաւիրուած...

— Ոչ ի՞նչ. ինձ կը ճանապարհեն:

Օպերային ներկայացումներին Մաղլէնն ունէր ձրի մուտք: Իսկ ճանապարհ պողոտաներ շատ կան:

Ով լինի-չլինի, տեսօրը կայ ու կայ: «Ես կը... կը... գամ... օրիորդ, օրիորդ». և աչքերը վառվում են կրակով. շունչն էլ կտրվում է... Հնա-հնա... Այդ արտայայտութիւնների մէջ է հէնց ազամարդկանց հոգին: Ասա, ի՞նչ շունչ կտրուելու բան կայ: Գովում է, գօփում է էլ հասակս, էլ ձայնս, էլ մազերս. որ թողնեմ՝ շորերս էլ կը գովէ: Այն օրը վեր կացայ, որ անցնեմ ֆօյէ, տեսնեմ՝ կանգնել է և ետևիցս երկար նայում: «Ի՞նչ էք կանգնել», — հարցնում եմ: «Ի՞նչ հրաշալի է ձեր դերիան»... Օրծագս հազիւ կարողացայ գտել: Իսկ նա շարունակ նայում էր, շունչն էլ բերնից դուրս էր գալիս, կարծես երկար ճանապարհ վաղած լինէր: Յետոյ թէ՛ «չէք դայ դրօսնելու»... Հնա-հնա-հնա... Գիշե-

ըուայ ժամը 12-ին, թատրոնից յիտոյ, կանչում է զբոսնելու: Մերժեցի. գլուխը կախ գցեց և սկսեց ածիլած կզակը ձրմբել: «Դուք,—ասում է,— գարնան երիտասարդ շողք էք»... Լսել էք այդպիսի համեմատութիւն... Բայց յանդուգն էլ է. բարեգործականի համերգում, բեմի հտե, մօտ վազեց; բռնեց ձեռքերս և... համբուրեց: այն, այսպէս բռնեց ձեռքերիցս և համբուրեց... Յետոյ թէ՛ «այնպէս լաւ երգեցիք, որ չհամբուրել չկարողացայ, չգիմացայ»... Ի՞նչ պիտի անէի: Տղամարդուն վայել հպարտութիւն չունի: Դըրանից յետոյ էլ երկու անգամ ճանապարհել է. ուզեցել է կուռս վերցնել՝ չեմ թողել: Է՛հ, այսօր էլ թող գայ, շատ-շատ՝ մինչև դուրը գայ և ասէ՛ «Օրիորդ, յանցանք կը լինի, եթէ ձայներդ չէք կատարելագործի»...

—Տատիկ ջան, եկ քեզ համբուրեմ. դէ, ցը... կուզես՝ մահճակալիս վրայ պառկէ: Հայրիկ, պատրաստ եմ...

Բայց որպիսի ոգևորութեամբ է նա վերադառնում թատրոնից: Աստուած իմ, եթէ կարողանային ամենքը ըմբռնել, թէ ի՞նչ հաճոյք է նա ստանում օպերային ներկայացումներից: Նրա հոգին կարծես թռչում է, սաւառնում, և նրան ամբողջապէս սլացնում են: Ուր՝ ինքն էլ չգիտէ: Միայն նա այս աշխարհում չէ, շրջապատողներից դուրս է... Սակայն այս երեկոյ դերասանուհին լաւ չերգեց... «Пиковая дама»-ն, այդ հրաշալի օպերան .. Лиза-ի արիան, այդ սքանչելի կտորը, որը Մադլէնն ինքն էլ երգել է քննութեան ժամանակ և 5 ստացել: Եւ այդ չքնադ արիան դերասանուհին փչացեց: Մադլէնը զգում է, որ իր ձայնն աւելի ուժեղ է...

Ужъ полночь близится...

А Германа все нѣтъ, все нѣтъ!...

Տի-բեմօլը... օ, բոլորովին կեղծեց... Յետոյ ինչի նման էր այդ երգչուհու արտաքինը... Այն զգայուն, երազող իր սևորակ աչքերով, ճկուն հասակով, վշտով լի Լիզան մի վաճառականի կին էր դարձել: Երգչուհին գէր էր, աչքերը գորշագոյն, խոր ընկած... Բի!.. Միթէ ինքը... Նայեց հայելուն... Սիրուն հասակը շտկուեց ամբողջապէս. գլուխը հպարտ բարձրացաւ. նա չկարողացաւ թաղել իր ներքին հաճոյքը:

Թշերը կարմիր են. ձախ թշի վրայի մատնեհարը շատ է գեղեցկացնում նրան. սակայն զարմանալի է. աջ թշի վրայ նոյն խաղը նա չի նկատում. այստեղ այնպէս խոր չի ընկնում, ինչպէս աջ թշի վրայ. շըրթունքները. նա կուղէր քիչ հաստ լինէին. բայց յիշում է, որ քեռորդին, առանձնապէս, շեշտում էր նրա շըրթունքների նրբութիւնը և ասում էր, թէ ընդհակառակը նուրբ շրթունքներն են գերադասելի. քիթը, եթէ քիչ նեղ լինէր, աւելի լաւ կը սաղէր. ինչ վերաբերում է աչքերին, ինքն էլ է համոզվում, որ նրանք կրակոտ են, սև, խորունկ... մազերը, ծամերը, ափսոս կարճ են, բայց խիտ ու գանգուր են, երկու կողքերից ալիքանման թափվում են մինչև ականջները... Իսկ այդ երգչուհու աչքերը... Բի!... Գորշագոյն... Ինչի՞ նման են իրօք բեմից գորշագոյն աչքերը: Չէ, Մադլէնը շատ գոհ է իր արտաքինից...

Առաւօտը եկաւ հայրը՝ յոգնած, ջարդուած: Նա հազիւ ցած դրեց ջութակը. հօր վրայից գալիս էր ծխախոտի կծու հոտ: Նա խօսել չէր ուզում. հազիւ կարողացաւ ասել՝

—Անկողինս պատրաստիր: Ա՛յ անխուռն այսպիսի աշխատանքը: 10 ժամին պիտի փորձի գնամ, նոր օպերա ենք պատրաստում:

—Գնացել էիք հարսանքատուն:

— Հազիւ փախայ... Ի վան Պետրովիչին թողի, ինքս չգնացի: Տատիկը գնացել է...

— Այո:

Մաղէնը խղճաց հօրը: Օ՛, երբ նա կը դառնայ կատարելագործուած երգչուհի, չի թողնի հօրը այդչափ աշխատել, մանաւանդ հարսանիքները ման գալ:

Եւ սիկ կասէր, որ Մաղէնի հայրիկը, մի առողջ ու առողջ տղամարդ, այժմ այնպէս է յոգնել, որ գոյնը վրան չի մնացել:

— Պատրաստ է անկողինը, հայրիկ. գոցէ թէյ խմէք...

— Քսակս վերցրու սերտուկիս գրպանից. փող շատ ունենք... է՛ն, Բարեկենդանի օրեր են. հիմա է մեր վաստակի ետուն ժամանակն է. կը գայ Մեծ-Պատը, այն ժամանակ հանգիստ կը լինենք...

Նա տուաւ սերտուկը:

— Ա՛յ, տեսնում ես, Մաղէն, մարդկանց պիտի զուարճացնես, իսկ ինքդ... Ձէ, բեմը դրսից լաւ է, բայց վարագոյրի ետեւը... օ, այդ վարագոյրի ետեւը... Ժիլետս էլ վերցրու: Ձէ, չէ, չեմ ուզում քեզ յուսահատեցնել... Իէ, համբուրեմ...

Նա գնաց պառկեց:

Բայց... Մաղէնի ձակտի վրայ ծալքերը խտացան:

Ո՛չ, ո՛չ, թողնենք այդ վարագոյրի ետեւը. միշտ կարելի է խուսափել դրանից...

ԳԼՈՒԽ Բ.

Մաղէնը ձեռքերը դրած կողքերին՝ հողեղմայլ կանգնած է դաշնամուրի առաջ և արագ շարժումներով մէկ-մէկ ցոյց է տալիս նուագակցող գերմանացի օ-

րիորդին կորցրած տակտերը: Նրա աչքերը փայլում են ներքին յուզմունքից:

Այժմ դաշնակցող օրիորդը և մանաւանդ սրա քոյր երգչուհին սիրով չեն վերաբերվում Մաղէնի համերգին:

Եւ ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ համար: Լոկ նրա համար, որ գերմանացի քոյրերի կօնցերտը անաջող անցաւ, լաւ եկամուտ չունեցաւ և երգչուհին ստիպուած եղաւ հրաժարուել իր համերգից: Մաղէնը մի՞թէ մեղաւոր է, որ տիկինը հանդիպեց անաջողութեան: Եթէ տիկինը վշտացած է, մի՞թէ այդ հանգամանքն ստիպում է նախանձով վերաբերուել Մաղէնին... մի՞թէ... Եւ դաշնակահար օրիորդը այդպէս էլ արամադրուած է. այդ երևում է նրա նուագելուց... Երկո՛. քոյրերն էլ խորհուրդ են տալիս յետաձգել համերգը... Խնդրեմ, նա իր սեփական խելքն ունի, մինչև անգամ հայրիկի խօսքերն այդ խնդրում նրա համար համոզեցուցիչ չեն:

Մաղէնը որոշել է համերգը տալ այստեղ Թիֆլիսում և վերջնական համոզմունք կազմել իր արժանիքների մասին:

Նօտայի թերթը պտտուեց, քիչ մնաց ընկնէր յատակին. Մաղէնը բռնեց և նորից շարունակեց փորձերը: Նա փորձում էր Գուեսոյի բարկարօլլան: Ա՛, այդ նախանձոտ աչքերը: Քոյրերը յատկապէս այդ կտորի դէմ են. դաշնակահարը գլուխը բարձրացրեց և խորհրդաւոր նայեց հէնց այն կէտին, որտեղ Մաղէնը պիտի դժուար գեղգեղանքին անցնէր: Օ՛, ես այնուամենայնիւ կերգեմ... Սակայն նրան թւում է, որ դաշնակահար քոյրը այնքան էլ մեղաւոր չէ. գեղգեղանքի տակտում նա շատ օգնեց, Մաղէնն աննկատելի կատարեց... Բայց աւելի նախանձոտ է երգչուհի քոյրը: Թո՛ղ. նա այնպէս կանէ, որ այդ տիկինը կը տրաքէ նախանձից: Տիկնոջ ձայնը կանօնաւոր չէ դրած. կար-

ծես մի խոր տեղից գալիս լինի: Այդպիսի հիմունքով դրած ձայնը երբէք չի կարող մշակուել... Ահա թէ ինչո՞ւ նա յանձն չառաւ պատրաստուել հրաժշտական դպրոցի նոր վարժուհու մօտ: Սակայն ինչ ուզում էք ասէք, այսօրուայ վերջնական կրկնողութիւնը նրան աջողվում է: Եթէ վաղն էլ այդպէս երգէ, էլ խօսք չունի ասելու... Թ'կուզ փող էլ չմնայ, գոնէ Թիֆլիսը կը տեսնէ, թէ նա ինչ է...

Այսօր գո՛հ է Մադլէնը. ձայնը պարզ է, մաքուր... Փորձից յետոյ ոչ մի տեղ դուրս չի գայ, լաւ կը հանգստանայ, կաթ կը խմէ, խնձոր կուտէ, և կատարելապէս կը մաքրուի ձայնը: Եւ, դիտէք, Մադլէնի համերգին շատերն են սպասում հետաքրքրութեամբ: Թող մէկը որևէ կասկածանք յայտնէ, եթէ ունի քաջութիւն: Փորձեցէք հարցնել: Ա՛յ, մէկը մինչև անգամ ասաց՝ «Ինչո՞ւ աֆիշ չէք տպել. դա առնուազն 50 մարդ աւել կը բերէր»... Բայց այստեղ հայրիկը դիմադրեց, տպել տուաւ միայն ծրագիրներ: «Այսպէս աւելի լաւ է,—ասաց,—համեստ եղիր»... Իսկ իր երկրպագուները կատարեալ անհամբերութեամբ ասում են՝ «Տեսէք, փայլէք հա՛... Խիստ ծափահարելու ենք»... Այդ բոլորից յետոյ կարճից է արդեօք յետաձգել համերգը և ղեկավարուել լոկ դրամական հաշիւներով: Չէր կարող, չէ՛, եթէ այդ գերմանուէին ստիպուած եղաւ հրաժարուել իր համերգից, այդ դեռ չի նշանակում, որ Մադլէնն էլ պիտի հրաժարուի: Մանաւանդ ծախսերի կէսն էլ արդէն հանել է: Բայց ոչ, նա աւելորդ կասկածներ է որ տածում է դէպի քոյրերը: Այս բօլէին նա սիրալիբ կերպով կը խնդրէ մի անգամ էլ կրկնել... Նախանձում է. ինչ անենք, բնական երևոյթ է. թող նախանձէ. Մադլէնը չի կարող փոխադարձաբար վատ վերաբերուել... Սակայն ինչո՞ւ համար է երգչուհին խորհուրդ

տալիս չերգել այն կոտորները, որ Մադլէնը աւելի ծանրակշիռ է համարում: Ասում է, որ չի աջողուի... Տէր Աստուած, նա հէնց սրա համար էլ դնում է այդ կոտորները, որ լսէ հասարակաց, մամուլի կարծիքը... Նա պէտք է համոզուի իր ոյժերի մասին, պէտք է համոզուի... Այո՛, այո՛, այսպէս. այդ կը լինի առաջին և վերջին փորձը... Եւ հայրիկն էլ կը համոզուի: Գիտէք ինչ է ասում հայրիկը: Նա ասում է՝ «Ճիշտ է, արժանիքներ ունես, բայց կամքիդ ոյժը...»: Սուս... կը տեսնենք այդ ոյժը: Ա՛յ, այսօր պէտք է գայ և լսէ փորձը... Նա ինքն էլ կամենում է, որ լսէ հայրիկը: Այդ մարդը զարմանալի հոտառութիւն և լսողութիւն ունի: Զուր չէր, որ ուսուցիչն էլ երբեմն ցանկանում էր նրա կարծիքները լսել... Նա շատ խստապահանջ է, բայց որ ասաց՝ «Լաւ է», վստահ երգիր...:

— Հայրիկ, եկա՞ք. սպասում եմ ձեզ... լսէք այդ բարկարօլլան... Այդ ֆինալից վախենում եմ...

— Կարող ես այստեղ կտրել ֆինալը թողնել... Բայց երգէ լսեմ...

Մադլէնն երկիւղ զգաց. այս բօլէին հայրիկը կը թոթափէ ձեռքերը և կասէ սառն կերպով՝ «Թո՛ղ այս կոտորը»...

Ի՞նչ սոսկալի գեղգեղանք է... Անխիդճ է այդ Գոլենօն, մի՞թէ կարելի է այսպիսի դժուար ֆինալ տալ, այն էլ 16-երորդականով: Մադլէնը բարձրացրեց գլուխը, բացից բերանը, նշան տուաւ օրիորդին և սկսեց.

Мол-ви, кра-са дѣ-ви-ца,  
 Путь намъ ку-да держать?  
 Челвъ мой ле-гокъ какъ птица,  
 Вѣтра не-на-до ж-латъ,  
 Вѣтра по на-до ж-дать.  
 Челвъ мой ле-гокъ какъ птица,

Вѣт-ра не на-до ждать,

Вѣт---ра не на---до ждать!

— Օ՞, նա երգեց այդ ծանր կտորը և շատ լաւ երգեց: Նա դգում է, որ հայրիկը շունչ անգամ չի քաշում, մարմնացած լսողութիւն է կտրուել: Անցաւ ծանր 16-երորդականը... Նա կարմրեց և վերջացրեց:

— Շատ լաւ է, — ասաց հայրը, — միայն այստեղ, այն, այստեղ շունչդ քաշէ, այնուհետև...

— Ո՞րտեղ:

— Այ, այստեղ...

Եւ հայրը շեշտեց և ձայնով ցոյց տուաւ.

„Вѣт---ра не на---до ждать“!

— Ուրեմն երգե՞մ:

— Անպայման:

Ինչէր են անցնում Մազլէնի գլխում այժմ, դժուար է հաւատալ: Ամենից առաջ հայրը դո՞ն մնաց փորձից: Այժմ Մազլէնը ուրախ է, ուրախ: Այժմ գնում է հանգստանալու: Ո՞ւր է գլխարկը, ո՞ւր է վերարկուն...

— Ո՞ր ես գնում, օրհնած, վերարկուդ այստեղ է, — ասաց հայրը: — Հագիր, քիչ սպասիր, որ կոկորդդ հանգստանայ:

— Դուրսը ցո՞ւրտ է:

— Ո՞չ, լաւ է:

— Այլևս փորձելու չէ՞ք, — հարցրեց գերմանուհի դաշնակահարը:

— Շնորհակալ եմ. ես վերջացրի... Իսկ ձեր քո՞յրը...

— Ո՞չ, ոչ, ինձ հարկաւոր չէ, — ասաց երգչուհի տիկինը, — ես առաջին անգամ չէ, որ երգում եմ:

Դրսում հայրն ասաց.

— Դիտե՛ս, մեղմից դաշնամուրի փող են պահանջում:

— Ի՞նչպէս. չէ՞ որ ընկերութիւնը խոստացել էր 20 բուրլով ամեն ինչ տալ:

— Ասում է՝ 20 բուրլի միայն դահլիճն է, իսկ այժմ բերել են նոր դաշնամուր և դրա համար էլ որոշուած է 10 բուրլի: Յոյս ունէիր, որ դահլիճը ձրի տրուէր... Այժմ...

— Թողէ՛ք, հայրիկ, տուէ՛ք...

— Այն ժամանակ ոչինչ չի մնայ... Ծախքերը շատ են...

— Թող չմնայ: Մենք չենք փասուի... Տոմսակներն ինչպէս են...

— Այսօր շարունակ շրջել եմ... օ, միայն... Բայց ոչ, ոչ, Համերգից յետոյ կը խօսենք այդ բուրժուա... Դիտե՛ս, դիմեցի Մատինհանցին...

— Նա ինքն էր ասում՝ «Օրիորդ, կազմեցէ՛ք, կը նպաստենք»...

— Այո՛, բայց այժմ... ասում է՝ այս օրերս կասայից 100 մանէթ եմ բաց թողել...

— Եւ հիմա այդպիսով ուզում է հանել...

— Կարո՞ղ ես երևակայել:

— Սիրունեանին տարէ՛ք. նա ասում էր՝ «Օրիորդ, ես ձեզ համար բարերար կը գտնեմ. եթէ չեղա՛ւ մեր մէջ կը հաւաքենք...»: Դա էլ չվերցրեց...

— Ասաց՝ այնքան շատ են տոմսակներ առաջարկում, որ... Յետոյ թէ՛ «Կիրս հիւանդ է, գուցէ, — ասում է, — գանք... Աջողութիւն կունենաք, — ասում է, — կունենաք»: Մի խօսքով՝ ու՛մ պատահում եմ՝ ասում են՝ «կը գանք»... Բայց տոմսակ չեն վերցնում:

Իսկ տանը հայրը խիստ զգուշօրէն ասաց.

— Մազլէն, արդեօք չյետաձգե՞նք համերգը: Վախենում եմ՝ փասս չունենանք:

Մազլէնի աչքերը մթազնեցին, գլուխը պտտուեց:

— Յետաձգե՛նք, ասում էր:

— Այո՛, յետաձգենք... Նոյն իսկ այն ընկերութիւնը...

»B

✓

✓

Л. У. Ю. Л. \* ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА  
С. С. Р. А. 7/ХІ—1922  
Имени А. Мясникова  
У. ԱՅՈՒՆԻՅԱՆԻ ԿՆՅԱՆԻ ԱՆՎՈՒՄ

ները, որոնց երեկոյթներին դու ձրի երգել ես, տոմսակ չառան, ասացին՝ «կը գանք», կամ...

— «Փեթակ» ընկերութեան տարւոյը:

— Զվերցրին...

Նա վայր թռաւ աթոռի վրայից և անսպասելի բարկութեամբ բացագանչեց.

— Ո՛չ, չեմ յետաձգում, ինչ ուզում է լինի:

— Գոնէ խօսք տուր ինձ, որ այսուհետև ձրի չես երգի և ո՛չ մի տեղ: Ես հաշուել եմ. դու ձրի 20 տեղ ես երգել. եթէ 10-ական բուբլի առնէիր, կունենայիր 200 բ., որը քեզ միջոց կը տար մի դաշնամուր դոնէ դնելու:

Մաղէնն ուսերը վեր քաշեց և մնաց անխօս:

Այո՛, նա ձրի երգել է, կամեցել է իրան ծանօթացնել:

— Մի քանի երեկոյթներում երգեցէք, — ասում էին նրան, — կը լսեն, կը ճանաչեն, յետոյ կը գտնուի մի բարերար...

Այո՛, այո՛, այդպէս էին ասում: Բայց անժամ: «Ո՛չ տեսանէք»... Ես ձեր բոլոր բարեգործական ձրիակերներին... Այո՛, այո՛, կը ճմրեմ: Դուք ստիպուած կը լինէք վարձատրել, ինչպէս ստիպուած էք վարձատրել ձեր ծառային... Դուք պատրաստ էք լուռ խայթել: Դուք մի սկսնակ երգչուհու սպանել էք ուզում: Նրա ամբողջ եկամուտն էք վերցնում... Սկզբունք է: Սկզբբունք է դահլիճի, ծառայի, դաշնամուրի վարձ... Ո՛չ, այդքանով դուք չէք բաւականանում... Իմ խեղճ հայրը ձեր համերգներին, երեկոյթներին համար շորեր է կարել... Դուք չէիք սպասում, որ բեմ դուրս գալը ծախսեր է պահանջում՝ զգեստից սկսած մինչև կառքի վարձը... Այդ ձեր երեսին միայն սառը ժպիտ է բերում: Այլ ևս... էլի... ինչ... Նոյնպէս կը վարուեմ

ձեզ հետ. սպասեցէք մի աշողեցնեմ և համեմ իմ նպատակին: Դուք կը գաք, կը բժնէք, կը խնդրէք... Բարեգործական նպատակ... աղքատներին օգտին... Այո՛, այո՛, այո՛...

Լսուեց մի աղմուկ: Ներս մտաւ Իվան Պետրովիչը: Հայրիկին այցելում է յաճախ Իվան Պետրովիչը: Անուան մի խարուէք. նա հայ է, միայն՝ Ռուսաստանից եկած հայ է: Նա ամուսնացած է: Հայրիկը առաջինն է եղել, որ դրդել է Իվան Պետրովիչին կլարնետ նուագելու: Դա գլխարկներ կարող էր. զինուորական ծառայութեան ժամանակ նրան գցել են՝ կազմուածքի թուլութեան շնորհիւ՝ երաժշտական խումբը. այստեղ սովորում է կլարնետ փչել: Իվան Պետրովիչը, ծառայութիւնից դուրս գալով, գլխարկներ կարելը թողնում է: Նա ունի միայն Շ կլարնետը: Հայրիկը Իվան Պետրովիչին տանում է հարսանիքներ, երեկոյթներ: Իվան Պետրովիչը նախապատուութիւն էր տալիս և սիրում էր հայրիկի հետ այցելել երեկոյթները, որովհետև հայրիկը աշխատում էր նուագել այնպիսի կտորներ, որոնք յարմարվում էին Շ կլարնետին: Ռուս հարսանիքներում հարկաւորվում է նուագել ժողովրդական «Барыня»-ն... Իվան Պետրովիչը միշտ նեղանում էր այդ կտորից: «Այդ անիծուած եղանակը երեք զիէզով է գրուած», — ասում էր նա, իսկ Շ կլարնետի վրայ երեք զիէզ կատարելը շատ դժուար է: Մաղէնը շատ անգամ է տեսել, թէ ինչպէս հայրիկը ջութակով Իվան Պետրովիչին ցուցմունքներ է արել... Իվան Պետրովիչը Մաղէնին որդու պէս սիրում էր, ուրախանում էր նրա ձայնի, աշողութիւնների վրայ: Այսօր էլ ներս մտնելով շատ սիրալիր ասաց.

— Մաղէն, տուր ձեռք, համբուրեմ: Գործերդ ինչպէս են... Վաղը գալիս եմ. այնքան պիտի ծափա-

հարեմ: ձեռներս չեմ խնայելու...

— Հայրիկը խորհուրդ է տալիս յետաձգելու:

— Չլինեմ, չիմանամ, — սասց Իվան Պետրովիչը, — այս անգամ հորդ մի լսիր, ինձ լսէ. նա թերահաւատ թոմասն է...

Իվան Պետրովիչը ծիծաղում էր. աչքերը ժպտում էին: Այսօր նա քիչ աւել է արբել. հանաք բան չէ. 8 սկահակ օղի է խմել. 5-ը խմել է աննկատելի. յետոյ նկատում էր, որ ծանր է: Բայց Իվան Պետրովիչը ինքն էլ դիտէ, սակայն կուլ է տուել և 8-րդը. այժմ նա թէյի ծարաւ է...

— Նստեցէք, մենք էլ պիտի թէյ խմենք... Ես պիտի ինքնահո սարքեմ, ձու խաշեմ, բօրնի բացեմ...

— Դու նստիր, ես ինքս կը սարքեմ:

Իվան Պետրովիչը հանգիստ սրտով վերցրեց ինքնահոնը, դուրս տարաւ, քիչ յետոյ վերադարձաւ թափահարելով գլուխը:

— Կնիկս այսօր էլի նեղացել էր: Ելի խմել ես, — ասում է: — Այ, Սարգիսը մարդ չէ, — ասում է, — որ չի խմում...: Բեզ ո՞վ սասց, որ կնկաս գլխին թագ պահես. միշտ քեզ հաւատարիմ է խօսում: Չէ, Մադլէն ջան, ինչպէս չխմէ մարդ: Ծիշտ է ասած՝ կնիկարմատ է, մազերը ձիգ՝ խելքը կարճ... Նրան սսեն, որ գայ, առաւօտուայ ցրտին „Барыня“-ն փչէ, փողոցէ փողոց պտտէ, տեսնեմ ինչպէս չի խմի: Այ, մազերս ձերմակեցին, կնկաս խելք սովորեցնել չկարողացայ: Ես էլ շատ կուզէի հարսանիքը վերջացրած տուն գայի, բայց չի լինում... Աշխատանքը փեսայի և աղջկայ տանն է լինում առաւօտները, հարսանիքից յետոյ: Յետոյ, իմանում ես, ինչքան հեռու ենք գնացել, քաղաքի ծայրը, ինքս էլ մենակ առաջին ձայն, առանց ջութակի... Ես էի, տրօմբօնը, պիստօնը և մէկ էլ երկրորդ ջութակը... Կնկաս եթէ լսեմ, կլարնետս պիտի ցած դնեմ... Ոչ, այս կլարնետը կնկաս հետ չեմ փոխի...

է՛հ, խօսքով եղայ, ինքնահոը գնաց:

Նրանք նստեցին թէյի:

Մութը վրայ կոխեց: Հեռում մաղում էր ձիւնը. մառախուղը թանձրանում էր: Դուրսը ցուրտ էր և բամբի:

Այս գիշերն է միայն: Հասկանում էր. վաղը արդէն վճռական օր է Մադլէնի համար: Նա արդէն որոշել է համերգը չյետաձգել: Ծիշտ է, անախորժութիւնները շատ-շատ են, բայց ինչ արած... Պիտի չաջողուի նիւթականի կողմից: Ահա Իվան Պետրովիչը նրան շատ է զարմացնում: Մարդը չի յուսահատվում. նա միշտ ասում է՝ սիրում է իր կլարնետը: Ծիշտ է, Իվան Պետրովիչը մի թափառական երաժիշտ է, նա նոյն իսկ չունի անհրաժեշտօրէն կարևոր B և A կլարնետները, բայց էլի մարդը չի վհատվում. իսկ դա շատ բան է: Եւ եթէ Իվան Պետրովիչը ստիպուած է նեղութիւններ քաշել, ինքն է մեղաւոր. նա խամ երաժիշտ է: Ահա հայրը. նա ուրիշ է. այնքան էլ խեղճ աստիճանի վրայ չէ: Հայրիկին ստիպիր մնալ առաւօտները հարսանիքներում, փորձիր նրան տանել փեսի կամ աղջկայ տունը, երբէք չի գնայ... Բայց Իվան Պետրովիչի միակ արդիւնքը այդ թափառումներն են:

Իվան Պետրովիչը գնաց, հայրն էլ պառկեց քնելու: Ափսոս, որ այդ համերգը նա մի տարի առաջ չկազմակերպեց. գոնէ այսօր նա կը տար երկրորդ համերգը և գուցէ 6 ամսուայ վճարը կունենար և կերթար Պետերբուրգ, այնուհետև կը տեսնէր... Իսկ այժմ...

Մէկը նրան փունջ է տալիս... Սիրտը տրոփում է... Ի՞նչ... Նա գլուխ է տալիս, ժպտում է, ձեռները դողում են. նա երբէք չի ընդունել փունջ. և սա նրա տաղանդի գնահատումն է... Դահլիճն էլ լինէ է... Նա արդէն 6 ամսուայ ծախսն ունի. մի համերգ էլ կը

տայ գաւառներում և... ամառը կը թռչէ, կերթայ...

— Բրաւօ, բրաւօ... bis! bis...!

Նա վեր թռաւ... Նոր նկատեց, որ աչքը բուն էր  
գնացել...

Գ. Լ. Ռ. Ե. Գ.

Ա՛խ, որքան քաղցր է... Օ, Մադլէնն այսօր շա-  
րունակ թռչկոտում է: Այդպիսի երեխայութիւններ նա  
էրբէք չի արել: Նա թախտից վեր թռաւ այնպիսի ա-  
րագութեամբ, քիչ մնաց որ աթոռը գցէ: Սակայն  
բարձր ընկաւ աննկատելի...

Մադլէնը մօտեցաւ իր սեղանին և նայեց տպուած  
ծրագրին, որը կախել էր հայելուց: Ծրագիր, ծրագիր,  
ի՛նչ աջող ծրագիր... Առաջին կտորը՝ բարկարօլլան՝  
նա երգեց. բուն ծափահարութիւններ: Ծիշտ է, ակօմ-  
պանիմենտը սխալուեց, յետ ընկաւ երկու տակտով,  
բայց այդ աննպատակ չեղաւ. նոյն օրիորդը իր քրոջը  
նուագակցելիս՝ շատ կարգին չափ բռնեց... Բայց ան-  
ցաւ. այժմ չարժէ դրա վրայ մտածել... Շուտով, շու-  
տով պէտք է հագնուել, շրջագոյնստը փոխել, կարող են  
գալ մամնակցող ընկերները:

Ով գայ-չգայ, դերասան Սալիւմեանը անպայման  
կը գայ: Դուք գիտէք դերասան Սալիւմեանին. նա ա-  
ռաջնակարգ ոյժ է, հայ դերասանների մէջ միակ ին-  
տելիգենտ, շնորհալի խաղացողը: Նա մի խօսք չստաց  
և խոստացաւ մամնակցել Մադլէնի համերգին և պահեց  
խօսքը:

Պէտք է շտապել:

Նա սկսեց հագնուել և շտկել սանրուածքը:

Երէկ գիշեր համերգից վերադառնալիս քիչ մնաց  
որ արասուէր: Աջողութիւնն անսպասելի էր: Դուրսը  
ցուրտ էր. նա փաթաթուել էր. բերանը չէր բացում,  
վախում էր՝ չմըսէր: Հայրն էլ լուռ էր, չէր խօսեցնում  
գիտմամբ... Բայց սրտի մէջ մի կրակ էր թնդում:  
Այժմ նա անյայտ երգչուհի չէ: Այժմ—նա չի կասկա-  
ծում—նրան ճանաչեցին: Վաղը կը խօսեն թերթերը,  
յետոյ շրջաններում... յետոյ էլի, էլի, վերջապէս՝ դուրս  
կը գայ մի մեկենաս և կը տայ նրան միջոց...

Անկիւնում նրանք պատահեցին մի խմբակի. չորս  
հոգի էին՝ բժիշկ, խմբագիր, միւս երկուսին չճանաչեց  
Մադլէնը: Խմբակն այնպիսի սիրալիք ողջոյններով  
դիմաւորեց, որ Մադլէնն ամաչեց. իսկ երկու անծա-  
նօթները նոյն իսկ ծափահարեցին:

— Խնդրեմ, խնդրեմ, օրիորդ, մի խօսէք, մի խօ-  
սէք, կը մըսէք,—ասաց բժիշկը:

Նա ամուր սեղմեց Մադլէնի ձեռքը: Հայրը շնոր-  
հակալութիւն արաւ, յետոյ վերցրեց Մադլէնի թևը, և  
ճանապարհը շարունակեցին: Նա սիրում է Մադլէնին  
թևանցուկ տանել: Մադլէնը ձախ կուռը թեքեց, տուաւ  
հօրը, իսկ ուղիկիւրը զգուշօրէն առաւ աջ ձեռքը: Իսկ  
գիտէք ինչ կայ այս ուղիկիւրի մէջ. մի սիրուն քսակ,  
սաղաֆէ քսակ: Ահա նա սեղմում է ձեռքը և ամուր  
պահում: Այդ տուաւ գեղարուեստական թերթի խմբ-  
ագիրը և խիստ զգուշօրէն, եկաւ բնմի ետև, այնտեղ  
էլ յայտնեց իր գոհունակութիւնը, խնդրեց մի քանի  
կենսագրական տեղեկութիւններ: Այդ խմբագիրը խիստ  
ժլատ է գովասանքներ շաղկիւռ մէջ... իսկ այժմ...  
Մադլէնը վերցրեց ընծան, շուռ-մուռ տուաւ մի քանի  
անդամ և երկար նայեց:

Ա՛խ, ի՛նչ հրաշալի են սաղաֆները: Նա զգուշօրէն  
կը պահպանէ, չի բանեցնի, թէ չէ՝ կարող է կորցնել:  
Միթէ այդ իրօք ինքն է ստացել իբրև իր տաղանդի  
վարձատրութիւն...

Պէտք է այդ ծրագիրն էլ ալքօմի մէջ դնել: Երեսուն-երկուերորդ ծրագիրն է: Բայց որտեղ սան, որտեղ նախորդները: Նրանք մի-մի պատահական կտորներ են սրահնրա հետ երգած բարեգործական երեկոյթներում, կլուբներում...

— Ես ընդ աչքի լոյսի պէս կը պահեմ: Միայն դու տուիր այն, ինչ որ ցանկանում էի: Դու չգիտես, թէ այժմ որքան ամրացած է իմ մէջ հաւատը, բայց չեմ ասում այդ ոչ ոքի: Մի կերպ կը համբերեմ, կը սպասեմ...

Նա հագնուեց. գլխի սանրուածքը, փունջը՝ շատ լաւ է, ճիշտ երէկուայ նման: Եւ մի զարմանալի կերպով երէկ նա սարքեց իր մազերը: Այդ դէպքում վարսավիրաներին նա չի դիմում:

— Սակայն փորձեմ այդ սանրը այս կողմից... Այո, այսպէս աւելի լաւ է: Իսկ այդ ծաղիկը, ո՛չ, ցրտից չի վախեցել, դիմացել է. այդ ես ստացել եմ ընկեր դերասանից: Որքան անոյշ բոյր ունի... Պէտք է ջուրը փոխել... Ափսոս որ չունեմ ծաղիկների համար յատուկ վազա... Բայց, ո՛չ, այդպէս աւելի լաւ է...

Նա ամրացրեց ձախ կրծքին մեխակի ծաղիկները, ջրով լիքը բաժակը վերցրեց սեղանի վրայից:

Դիւաւորն այն է, որ չպիտի ընկճուել, հաւատը կորցնել: Իսկ այսօր նամանաւանդ՝ երևում է ըստ ամենայնի, որ Մադլէնն ամուր կը մնայ իր հաւատի մէջ: Նա տողորուած է այն յուսով, որ աշխարհիս վրայ կան բարի և բարեացակամ մարդիկ, կան մարդիկ, որոնք գիտեն գնահատել և յարգել տաղանդը, հասկանալ գեղարուեստի հոգեպարար ոյժը: Այժմ նա պատրաստ է, կարող է արդէն ընդունել հիւրերին:

— Դու, ամենն ես մնալու, — հարցրեց հայրը, երբ

Մադլէնը դուրս եկաւ ննջարանից, կանխաւ մի վերջին հայեացք գցելով հայելուն:

— Այո, տանն եմ մնում: Մինչև թերթերի դուրս գալը՝ հասարակութիան չեմ ուզում երևալ:

— Իսկ ես կերթամ... Պիտի ստանամ մի քանի ապառիկներ, թերթերն էլ կը գնեմ. երեկոյեան ժամը 9-ին՝ վաղուան թերթերը արդէն դուրս են գալիս:

— Իսկ թատրոն չեմ երթայ:

— Այսօր չէ. ես խնդրեցի, որ ազատ թողնեն ..

— Հայրիկ, բոլոր թերթերը գնէ, վրացոցը չմոռանաս... Նրանց թերթի կողմից մարդ կար՝ ասում են:

— Անպայման կը գնեմ: Դէ, մի համբոյր...

Մադլէնն ընկաւ հօր գիրկը, հայրը երկար նրան պահեց և համբուրեց:

Հայրը սովորականից դուրս ամուր համբուրեց նրան: Անկասկած է... հաւանօրէն նոյնպէս համոզուել է: Բանի որ հայրը այդպէս սիրով գրկեց, ուրեմն նա դո՛ւ է համերգից: Նրա ձեռները կարծես թէ դողում են... Հօրից այդպիսի կարծիք... Ուրեմն նա երգչուհի է: Վերջապէս: Երկու տարի է, որ չի աջողվում վերջնականապէս համոզել մարդկանց. այժմ գոնէ: Թող գերմանուհին իրան պատենտաւոր երգչուհի համարէ. թող նա պատենտ ունենայ, իսկ ինքը մի սկսնակ... Այդ շիկահեր գերմանուհին վատ վարուեց նրա հետ. դուէտը երգեց թէ չէ, թողեց ու անհետացաւ. նոյն իսկ մնաս-բարև էլ չասաց... Նախանձից. իսկ ինքը միթէ չի վարուած նախանձով դէպի կատարելագործուած տաղանդները: Ծիշտ է, բայց և այնպէս նա տեսնում է, թէ ո՞վ է իրանից բարձր կանգնած... «Տանել չեմ կարողանում թոյլ ձայն ունեցող երգչիներին. դրանք — իսկ կանայք նամանաւանդ — աւելի չար նախանձով են լինում լցուած: Թունտոներ...»: Բոլոր

այդ տեսակ անձայն երգիչներին նա խորհուրդ կը տար ծրարական դպրոցներում երգեցողութեան դասեր ստանձնել. սրանց տեղը դպրոցն է, ոչ թէ բնավ:

Եկաւ Սալլամեանը. բերեց նոր ծաղիկներ:

—Օ, այդ գո՛ւր էք, Մադլէն:

Նա համբուրեց ձեռքը:

—Ձեզ ճանաչել չի լինում: Այս ինչ գեղեցկութիւն. փայլում էք, փայլում. ցած գցեցէք ձեր աչքերը...

—Նստեցէք, նստեցէք, թողէք հանաքները: Ես ձեզնից չափազանց շնորհակալ եմ: Դուք երէկ աննման էիք:

—Ձգացուած եմ:

—Այն ծերունու ախլը ինչ հրաշալի ներկայացրիք և առանց խօսքի... Դուք շատ հարուստ միմիկա ունէք... Բայց թողէք ձեռքս, թողէք, որ ծաղիկները ջրի մէջ գնեն...

Մադլէնը ամօթխած ժպիտով վերցրեց փուռնը:

—Հո՛ւ, բնութեան երկու հրաշալիքները. կոյսն ու ծաղիկները... Այժմ ուզում էք որ լուրջ խօսեմ, համեցէք. բայց մինչև այդ էլ շատ լուրջ էի խօսում...

—Լա՛ւ, լաւ, նստեցէք, պատմեցէք ի՞նչ են խօսում դուրսը:

—Բոլորը հիացմունքով: Այժմ աշխատեցէք, որ կէս ճանապարհի վրայ չմնաք: Իմ գնալը որոշուեց. գնում եմ Մօսկովա պարագելու, սովորելու... Գտայ մէկին և մի տարուայ ապահովութիւն ունենմ:

—Ճիշտ. ուրեմն շնորհաւորում եմ. շատ ուրախ եմ...

—Դուք էլ կը գտնէք. տարէնը երկու համբո՞ղ... Գաւառները, գաւառները պատեցէք... Թիֆլիսը տոնը տուաւ. դա շատ բան է... Մի վախենաք: Դուք միայն

վստահութեամբ... Տէր Աստուած, երէկ որքան գեղեցիկ էիք բեմից... Տղամարդիկ տարվում էին... Այ, այ այդ աչքերը. կարծես հասակով էլ բարձրացել էիք. և ի՞նչ սիրուն զգեստ էիք հագել... Արտաքի՛նը, արտաքի՛նը, գիտէ՞ք բեմի համար ինչքան բան է: Կանայք չեն հասկանայ. նրանք նոյն իսկ նախանձով կը գան, կասեն, թէ ձեր գրիմը լաւ չէ, սանրուածքը այնպէս չէ. ուշադրութիւն չդարձնէք, հի-հի-հի... Ինչ որ ասացին՝ լաւ չէ, այն էլ իմացէք, որ լաւ է... Այդպէս է կանանց լեզուն. ես խօ մեղաւոր չեմ...

—Իսկ տղամարդիկ... Դրանց միայն արտաքի՛նը տուր... Շատ ողորմելի են...

—Նո՛ւ, դուք աշխարհը փոխելու չէք: Բայց, Իրօք, ինչո՞ւ չենք նստում: Ձեզ մօտ կարո՞ղ եմ նստել... Այսօր ես ես շատ լաւ տրամադրուած եմ: Եթէ իմ բենեֆիսին այդպէս երգէք, օ, ես ձեզ կը համբուրեմ... Հիմա չէ, հիմա չէ, մի վախենաք, յետոյ, յետոյ, իմ բենեֆիսից յետոյ, այն էլ՝ եթէ լաւ երգէք...

Մադլէնը ժպտաց, զգուշօրէն ուղղեց շրջազգեստը և աւելի խոր տեղաւորուեց թախտի վրայ:

—Ես ձեզ, Սալլամեան, նախանձում եմ: Ի՛նչպէս կարողացաք գտնել նպաստ: Ինձ թւում է, որ ես չեմ գտնի...

—Պէտք է աշխատել:

—Կին-մարդու համար դժուար է:

—Տղամարդու համար էլ հեշտ չէ:

Մադլէնը շատ է լսել, որ եթէ հարուստ տիկիներին մէկն ու մէկը դերասանին հաւանի, ապա դուրութեամբ կաջողեցնէ: Նա մի սարսուռ զգաց... այդպէս... Ուրեմն դա է աւելի կարճ ճանապարհը... Ի՞նչ արած: Նա դող է զգում... Ո՛չ, ո՛չ, աշխարհը այնքան էլ խայտառակ չէ, մարդիկ էլ փչացած... Տաղանդը կը յաղթանակէ... Բայց նա աշխատեց ցրել այդ անհեթեթութիւնները: Այսօր չէ, վաղը դուրս կը գայ, մի քիչ

էլ կը տանջուի սպասողական դրութիւնից, իսկ այնուհետև ուղղակի Պետերբուրգ... Միայն թէ թերթերը լաւ գրեն. այնուհետև մէկն անպայման դուրս կը գայ: Աստուած, լոյս գցիր մի մարդ, եթէ ոչ՝ նա ստիպուած կը լինի գնալ, մի պաշտօն ձարել. այնուհետև մնաս բարև, երգ, Չայկովսկի, Ռուբինշտէյն... Նրան թուաց, որ խօսակցութիւնը երկար ժամանակով է ընդհատուել: Մի բան ասած լինելու համար՝ նա հարցրեց.

— Ինչո՞ւ նեղութիւն քաշեցիք, ինչո՞ւ բերիք այս փունջը:

— Որովհետև այս ծաղիկները մէջ գտնուում եմ ձեր հմայիչ առաւելութիւնները:

— Ո՛չ, ոչ, չար մարդիկ միայն անտարբեր են դէպի ծաղիկները...

Սալիւմեանը լայն բացեց աչքի կոպերը և անյագօրէն կլանեց ծաղիկների գեղեցկութիւնը:

— Տեսէք, Մադլէն, բնութեան կատարեալ յաղթութիւն: Այդ քրիզանտեմները ինչքան հրաշալի են, այնպէս չէ՞, որ սրանց մէջ շնչում է կեանքը... Ի՞նչ է կեանքը, եթէ ոչ յարատևօրէն աճող ոգևորութիւն և տրամադրութիւն. և եթէ մարդս զգում է իր մէջ հոգու և տրամադրութեան մշտական լարում, ինձ թւում է, որ դա է հէնց կեանքի միակ նեցուկը: Տեսէք այդ քրիզանտեմները որքան հպարտ են. դրանք ստուերի տակ թագնուողներից չեն. բաւական է որ շարժեն զլուխները, և գոյների ինչպիսի՛ հիասքանչ խաղ, ինչպիսի՛ խաղ: Ո՞ր ծաղկի գոյների ներդաշնակութիւնը սրանց կը հասնի. այստեղ կը գտնէք ծիածանի բոլոր գոյները: Նայեցէք, օրինակ, այս մէկին. մուգ-կարմիրը փոխվում է յարգագոյնի. այստեղ կապոյտ ածխանաման շողք, այնտեղ հողագոյն, բաց-դեղին... Այս ծաղիկները կարող են ասել, որ ամբողջ աշխարհը իրանց է պատկանում, թէ արևը, թէ ստուերը, թէ խոր ու մութ ձորերը, լեռների դագաթները, հովիտները, բոլորը,

բոլորը սրանց են պատկանում... Սա այժմ համաշխարհային մի ծաղիկ է դարձել, աշխարհի ամեն ծայրում նրան փայփայում են...

Նա վերցրեց Մադլէնի ձեռքը, նայեց ծաղիկներին, նրանց խաղերին և տարուեց նրանց գեղեցկութիւնով. նոյն տրամադրութեամբ լարեց և Մադլէնին: Յանկարծ նա ակամայ վեր թռաւ, որովհետև օրիորդը զգուշութեամբ յետ քաշեց իր ձեռքը: Սալիւմեանը լուռ նայեց օրիորդի աչքերին, նրա երկայն արտևանունքներին, նուրբ շրթունքներին և նկատեց, որ նրանց վրայ ընկել էին խորհրդաւոր մի խոր զգացմունքի երկիւզած ու դողդոջիւն նշաններ:

— Լաւ նայեցէք, Մադլէն, սո՛ւտ եմ ասում... այդ ծաղիկները կեանք չեն ներշնչում... Ես այլ կերպ չկարողացայ... Ես ինձ թշուառ կը համարէի, եթէ ձեր սիրած ծաղիկները չբերէի, չբաշալի է... օօօ... բը՛ւտ... Ոչ, ոչ, ես չեմ կամենում... Շուտով պիտի գնամ... Ուրիշ յիշատակ չեմ կարող բերել ձեզ համար, չեմ կարող ցաւում եմ... Եւ ի՞նչ, երբ դուք ևս պէտք է սովորէք... Իսկ յետոյ՝ ով գիտէ...

Մադլէնը բարձրացրեց աչքերը. նրա դէմքի գծերը յանկարծ լրջացան, բերանի անկիւններն իջան, բայց յետոյ նա իսկոյն սթափուեց:

— Այո՛, այո՛, մենք պէտք է սովորենք...

Ներս մտան հայրը և Իվան Պետրովիչը:

— Շնորհաւորում եմ, շնորհաւորում եմ... Խելօք կնկաս ասացի որ գայ, չեկաւ: Մի պահանջիր, Մադլէն, նա երէկ էլ չեկաւ... Բայց տես թէ թերթերը ինչ են գրում:

— Արդէն բերի՞ք... Խնդրեմ ծանօթանաք. դերասան Սալիւմեան:

— Շատ ուրախ եմ: Իվան Պետրովիչ, գլխարկներ

կարող և կլարնետիստ: Երէկ զուք էլ մի արտակարգ ֆուրոր արէր:

— Բերէք, բերէք, — ընդհատեց Սալիւմեանը:

Սալիւմեանը բացեց հայերէն՝ առաջնակարգ թերթերից մէկը և սկսեց բարձր ձայնով կարդալ: Մաղլէնն ուրախութիւնից շանթահարուեց: Նա մեծ ուշադրութեամբ հետեւում էր Սալիւմեանի ձայնին, շեշտերին... Օ, նա պատրաստ է համբուրել նրան, որովհետեւ դա է, որ կարդում է առաջին նշանակալից քննադատութիւնը: Օ', նա այժմ մի նոր արժամ կը գնէ և այսօրուայ սեցննդիաները մէկիկ-մէկիկ կը զետեղէ՝ այնտեղ: Այսօրուանից նա զգում է, որ կեանքի մի նոր շրջան է մտնում: Կեանքում նա այդպիսի ուրախ բազմեր չի ունեցել: Նոյն իսկ այն օրը, երբ առաջին անգամ հագել էր երկար, մեծի շրջագրեստ, նա այդպիսի յոյզեր չի կրել:

Թերթերը բոլորովին շանթեցին նրան: Սալիւմեանը կարդում էր մէկը-միւսի ետևից: Կարգաց հայոց երկու օրաթերթը, ոռուսաց երեք և մէկ էլ վրացոց թերթը... Բոլորն էլ միաբերան հիացմունք էին արտայայտում: Շեշտուած էին նաև Սալիւմեանի արտասանած ոտանաւորները: Մանաւանդ անկեղծ կարծիք երևաց հայ թերթերից մէկի մէջ: Մաղլէնի մասին այստեղ գրուած էր.

«Մարութ, հաճելի, փաղաքշոյ ձայն ունի երգչուհի Մաղլէնը: Երգում է զգացմունքով, բաւական աջող արտայայտում է երաժշտական պարբերութիւնները և ազատօրէն կարդադրում է ձայնը բարձր և ստորին աստիճաններում կամ ուղիստրներում: Երգչուհին ունի իր տրամադրութեան տակ գեղեցիկ, հիմնական նիւթ, որը արդէն բաւական մշակուած է: Եւ անշուշտ ցանկալի է, որ նա հնարաւորութիւն ունենար իր ձայնը կատարելագործելու: Այդ կատարելագործութիւնը պէտք է մի կողմից շարունակի ձայնի մշակման գործը, միւս

73

կողմից սայ երգչուհու ձեռքը ամբողջ ռեպերտուար, որով նա կարողանայ հանդէս գալ իբրև երգչուհի մեծ բեմի վրայ»:

— Բրաւօ, բրաւօ, — ծափահարեց Սալիւմեանը՝ անկեղծ ուրախանալով, — շնորհաւորում եմ...

Եւ Մաղլէնը զգաց մի տաք համբոյր աջ ձեռքի վրայ:

— Իէ, կեցցես... Ասում էի, որ իմ Մաղլէնը պարզերես զուրս կը գայ: Ի վան Պետրովիչը շան հոտառութիւն ունի երաժշտութեան մէջ, ինչ անես, որ մի կլարնետ ունի... Ապրես...

Նա նոյնպէս համբուրեց օրիորդի ձակատից:

Մօտեցաւ հայրը, զրկեց և պահեց նրան երկար համբոյրների տակ:

Մաղլէնը քիչ մնաց արտասուի: Ուրախութեան այնպիսի գագաթնակէտին էր զգում իրան, որ չէր լսում նոյն իսկ, թէ ինչ է ասում հայրը:

Մինչդեռ նա շարունակ խրախուսում էր.

— Պահէ, պահէ այդ սեցննդիաները, — ասում էր նա, — պէտք կը գան: Այո՛, այո՛, այո՛, ոչ մի չափազանցութիւն, բոլորը ճիշտ է, բրաւօ. զուր են մեղադրում մեր թերթերին. մարդիկ բաւականին ճիշտ ըմբռնել են...

Այդ վերաբերմունքը Մաղլէնին պատճառեց մեծ հաճոյք, այնպիսի հաճոյք, երբ մարդս զգում է, որ իր կողմն են յաղթութիւնը, ոյժը և տաղանդի առաւելութիւնը: Նրան մանաւանդ զուր կեան լրագրի այս խօսքերը.

«Ձայնը արդէն մշակուած, հարկաւոր է միայն ռեպերտուար մշակելը»...

— Օ', միթէ ճիշտ է. ուրեմն ճիշտ է, ինչ որ մինչև օրս ասում էին:

Քիչ-քիչ նա հանգստացաւ: Նա շրջապատուած է իր մտերիմներով, աջողութիւնը իր կողմն է. էլ ինչի մասին մտածէ: Ինչպէս անսպասելի կատարուեց այդ ամենը: Այն կարիքի մէջ, որ նա ապրել է այսքան տարի, շարունակ սգասողութիւնների, տանջանքների մէջ, գլխովն էլ չէր անցնում, թէ այսպէս շուտով ձեռք կը բերէ այդպիսի աջողութիւն... Արդեօք... չափազանցութիւն չէ՞. գրողները տղամարդիկ են, գուցէ նրա ուրիշ արժանիքներն են տեսնում... Նրանք մի բան գիտեն նկատել կիրն-մարդու մէջ... յօնքեր, կուրծք, հասակ... Ա՛խ, ինչեր է կատարվում այժմ նրա սրտի մէջ... Սակայն և այնպէս նա ուրախ է, ոգևորուած է... Ո՛չ, ո՛չ, դրանք անկեղծ են, անկեղծ. նա հաւատում է իր բարեկամներին: Եթէ սրանց մէջ և ծագում է տենչալի հակումներ, նա չի նեղանում. դա բնական է: Նա ինքն էլ գիտէ, որ օժտուած է յուզելու առաւելութիւններով: Եւ միթէ նա կը ցանկանար զուրկ լինել տղամարդկանց դուր գալու տենչից: Աստուած մի արասցէ:

Յանկարծ Սալիւմեանը հրեց Մադլէնի ձեռքն և ցոյց տուաւ հօրը, որ այդ միջոցին պատրաստում էր սեղանը Իվան Պետրովիչի օգնութեամբ:

— Այո՛, հայրիկը շատ է աշխատում,—ասաց Մադլէնը,— եթէ նա չօգնէր, իմ համերգը գուցէ... չգիտեմ, ոչ մի կազմակերպչական մասի մէջ չեմ խառնուել... Նա տանն էլ այդպէս է. կարգ ու կանօնի համար ինձ շատ է կշտամբում: Մեղքս ասեմ՝ չեմ սիրում տան գործերով զբաղուել:

— Իսկ այդ կօմիկը ո՞վ է:

— Կլարնետիստ է. մի շատ բարի մարդ: Հայրիկն ու նա մէկ-մէկու կանանց գլխին պսակ են պահել:

Սալիւմեանի հայեացքը կանգ առաւ Մադլէնի երեսին: Ինչ-որ անըմբռնելի ոյժ սեղմեց նրա կանացի սիրտը:

— Ա՛յ, շուտով, շուտով փախչեմ Մօսկվա,—յանկարծ ընդհատեց լուռութիւնը դերասանը:

Մադլէնը հասկացաւ նրան և աշխատեց նոյն ուղղութեամբ խօսքը շարունակել:

— Ես էլ կերթամ Պետերբուրգ,—ասաց նա խիստ յուզուելով... —

— Տեսէք, տեսէք, ինչպէս է ինքնաեւր բերում,—յանկարծ ասաց դերասանը.— տեսէք, ձեռներն էլ այրեց, էլի վագեց... Չէք նայ՞ում...

Ընթրիքը, թէյը շատ ուրախ անցաւ. կարծես հաւաքուել էին հարսանիքի: Իվան Պետրովիչը շարունակ աթոռն այս ու այն կողմն էր բաշում, մօտեցնում էր սեղանին և ըստ երևոյթին չէր կարողանում տեղաւորուել սեղանի գլխում:

— Այս կողմը քաշուեցէք, հայրիկ: Մի կերպ տեղաւորուեցէք: Սալիւմեան, դուք այս կողմը նստեցէք: Ի՞նչ անենք, սենեակներս փոքր է, անյարմար. սեղանը դնելու տեղ չունենք:

— Ա՛յ, ինչ անենք,—վեր կացաւ դերասանը,— ձեր տուալէտի այս սեղանը տանենք, անկիւնը դնենք. այդ սեղանն էլ կը քաշենք մէջտեղ և տեղ կը բացուի: Խնդրեմ, Իվան Պետրովիչ, օգնեցէք...

— Ձեր խաթրու՝ մօլլայի ճակատն էլ կը պահեմ: Բայց զուր էք աշխատում, կը տեղաւորուենք. պատիկ ժամում մեծ պատարագ չէ՞ն անուս... Սրտներդ լայն պահեցէք... Եղան...

— Շատ լաւ է:

— Օղի ածեցէք Իվան Պետրովիչի համար,—ասաց Մադլէնը, երբ բոլորը տեղաւորուեցին սեղանի շուրջը: Իվան Պետրովիչը հրաժարվում էր օղի խմելուց:

— Չուր ես կարծում, Մադլէն, որ ես մշտական գործածող եմ: Ուրիշ է հարսանիքի բանը, ցրտում. էն

որ խմում ես, լաւ ես փչում... Հիմա, այսօր էլ ուրիշ է հանդամանքը. քո աջողութեան համար մէկը կը խմեմ... Միայն՝ աւելին չխնդրես...

—Այն ժամանակ մի բան վերցրէք, ես խնդրել չգիտեմ: Ախր ինչո՞ւ տիկնոջը չբերիք...

—է՛, նա ուրիշ աշխարհի տէր մարդ է: Ա՛յ, իմ մագերը սպիտակել են, բայց էլի ոգևորուել գիտեմ... սառը մարդ չեմ սիրում... Հայրիկդ է մեղաւոր...

—Ի՞նչո՞ւ:

—Հարցրու իրանից:

—Տիկնոջը երկու հոգի ենք ջոկել, —ասաց հայրը:

—Բայց էլի անաջող, — ընդհատեց Իվան Պետրովիչը:

—Ինչպէ՞ս թէ երկու հոգի, — հետաքրքրուեց Սալիմեանը:

—Պատահում է, —ասաց Սարգիսը. —այս մարդը պսակուել էր ուզում, աղջիկ չէր ճարվում. սա լոյս ընկաւ. վճռել չէր կարողանում: Մենք երկուսովս գնացինք հարս տեսնելու:

—Ի՞նչպէ՞ս:

—Այնպէս. պատուհանի տակից ծածուկ նայեցինք...

—Հն-հն-հն..., — ծիծաղեց Մադլէնը: — Ներս էլ չմտնք...

—Ի հարկէ չէ:

Բոլորը ծիծաղեցին:

—Կարճ ասեմ, մայրս չթողեց, որ իմ ուզած աղջկան առնեմ. նա փող չունէր, իսկ սա փող բերեց... Այդ թողնենք. եղածը եղած է: Հէ՛, Մադլէն ջան: Ես դրան գիտէք ինչպէս եմ սիրում. ինչպէս իմ աղջկան: Ի՛մ առաջ է ծնուել... Եւ այս խելօքը գիտէք ինչ արաւ. ասեմ...

—Ասն, ասն, — ընդհատեց Սարգիսը:

—Հէնց որ լսեց կնոջ ճղճղոցները, գժի նման

դուրս վազեց: Դուրսը մի սանդուղ ունէին, որը տանում էր դէպի կտուրը: Եթէ փէշից չբռնէի, կտուրը կը վազէր... Էհ, խեղճ կինը մեռաւ. լաւ կին էր: Գիտես, Մադլէն. ասեմ...

—Ասն, ասն, — կցեց Սարգիսը:

—Այդ աղջկայ վրայ երկուսս էլ սիրահարուած էինք...

—Ո՞ւմ վրայ, մճրս վրայ:

—Ի՞նչ է. անկարելի՞ բան ես համարում: Բայց ես գիշեցի և գնացի այդ խելօք կնկաս պատահեցի: Այնքան խելօք է, որ մի երեխայ ծնելու էլ շնորհք չունի:

—Դուք անգաւանկ էք, — հարցրեց Սալիմեանը:

—Եղբայր, ձեռք էք առել. ի՞նչ էք ինձնով հետաքրքրվում: Այս աղջկան թողել էք... Հիմա, Մադլէն, մեր արտիստների ասպարէզը քեզ մեխեց, չէ՞: Օ՛, այդ արուեստը իմ կեանքս է, թէ՛ և ինքս քոստո կլարնետիստ եմ: Պատահում է, մի երկու շաբաթ որ պաս է լինում, տեղ չի լինում նուագելու, ստիպուած եմ լինում գողալներ կարել... խեղդվում եմ, զզվում եմ... Հանաք չանես արտիստական կեանքի հետ...

Մադլէնն սկսեց թէյ լցնել: Իվան Պետրովիչը մէկը միւսի հակեց դատարկում էր թէյի բաժակները, այնպէս որ Մադլէնը չէր հասնում լցնելու թէյանոցը: Պարապ րօպէներում նա շատ թափանցող աչքերով դիտում էր սղամարդկանց, թօթվում էր ուսերը, երբեմն ժպտում էր կօկետաբար: Այն, այն, այժմ նա նոյնպէս գեղարուեստի աշխարհի մարդ է: Սպասեցէք մի-երկու տարի... Նա տեղում շարժումներ է գործում, ամբողջ էութեամբ բռնում է իւրաքանչիւր խօսքը, ըմբռնում է առանձնակի շեշտադրութիւնը... Բոլորի մէջ ուզում է իմանալ կարծիքները: Եւ նա շատ ուրախ է, որ իրան կապուած է զգում արտիստական աշխարհի հետ: Նա

ուրախ է, որ իր հայրն էլ հոգով արտփատ է, Իվան Պետրովիչն էլ արտփատ է... Միայն ինչ-որ քմահաճոյք մէկին դրել է բարձր պատուանդանի վրայ, միւսին ցած: Բայց իրօք՝ դրանք սրտով մէկ-մէկու մօտ են... Կեանքի խորթութիւնն է խէթ աչքով նայում դրանց վրայ, սակայն դադափարը, միևնոյն կուռքը, որին պաշտում են սրանք, միացրել է, մօտեցրել է այդ փոքրիկ մարդկանց:

— Դուք գիտէ՞ք, — ասաց Մադլէնը, — ես ընծայ էլ եմ ստացել:

Նա շտապ վեր կացաւ և բերեց քսակը:

— Ումից, ումից, ի՞նչ էք կարծում. գեղարուեստական թերթի խմբագրից: Նա շատ է ցանկանում, որ ձայնս մշակեմ:

— Մի՞թէ, — հարցրեց դերասանը:

Որքան գոհ սրտով նայում էր Մադլէնը հիւրերի տնտղելուն, եթէ իմանաք. Իվան Պետրովիչը նոյն իսկ վեր թռաւ տեղից և քիչ ֆնաց որ սեղանը շուռ տար:

— Օ, Մադլէն ջան, որ այդպէս է, թէյ լցրու... Բոլորը ծիծաղեցին անկեղծօրէն:

Մադլէնն ուզում է մի բայէ հեռանալ, շունչ քաշել: Ա՛խ, որքան նա զգացուած է: Հայրն էլ նրան համբուրեց: Նա լուռ բարձրացաւ. սիրտը բարախում էր: Դրանք հասարակ կարծիքներ չեն. բոլորն էլ առուեստագէտների կարծիք է:

«Իսկ հայրիկը, որքան նա այսօր լաւ է, կարծես 10 տարով ջահելացել է» — մտածեց իր մէջ Մադլէնը:

— Որ այդպէս է, — ասաց Իվան Պետրովիչը, — ինձ համար մի բաժակ էլ լից. և դա կը լինի եօթերորդը. մի գարմանար, թէյը սիրում եմ... Շատ անգամ կի՛նս ասում է՝ «Մարդ, ի՞նչ եղար, կոկորդղ խօ՞ չի ծակուել. ինքնահոռի ջուրը պրծաւ»... Դէ, նա կի՛ն է, արագ եմ խմում՝ մի ցաւ, թէյ եմ ուզում՝ էլի ցաւ...»

Այսօր շատ բան պարզուեց Մադլէնի համար: Նա կտրեց անցեալ կեանքի ամեն մի կապը: Այժմ նա որոշ տեղ է բռնում երգչուհիների մէջ: Թիֆլիսը յայտարարեց իր կարծիքը. նոյն ոգևորութեամբ միաբերան գովեցին երեք կուլտուրական ազգերի թերթերը: Ինչպէս երջանիկ է նա... Նա ուզում է այժմ դուրս գալ փողոց, պատահել աւելի մեծ հոսանքի և տեսնել, թէ ի՞նչ են խօսում... Թէև այժմ շատ ուշ է, բայց գոնէ մի անգամ անցնէ... Մանաւանդ նա ուզում է պատահել իր հակառակորդներին. շատ չի խօսելու դրանց հետ, միայն բարեկու է և անցնելու...»

ԳԼՈՒԽ Դ.

Աղքատախնամ ընկերութեան կազմած արտակարգ երեկոյթը Արտիստականի դահլիճում գրաւել է մեծ բազմութիւն:

Արտիստական Ընկերութեան դահլիճում կազմուած երեկոյթները միշտ փայլում են իրանց բազմամարդութեամբ: Միշտ ուրախ, միշտ աղմկալից... Իր շքեղ զարդարանքով, մի շարք սենեակներով, հայելապատ դահլիճով գրաւել է այդ շէնքը, ինչպէս մի շքեղ զարդարուած հարս: Մանաւանդ հմայիչ է գլխաւոր դահլիճը իր թանգազին գոյնզգոյն, ոսկեգօծ պատառներով, էլեքտրական առատ լոյսով, հսկայական ջահերով, հոյակապ ընդարձակութեամբ, գողտրիկ բեմով. վերածնութեան դարի ոճով շինուած մեծ-մեծ պատուհաններով:

Բարեկենդանի օրերին այստեղի այցելողների շարքերը նամանաւանդ ստուարանում են քաղաքի ա-

ոսջնակարգ իշխաններ, վաճառականների ներկայացուցիչներով: Սրանք այստեղի երեկոյթների անխուսափելի յաճախորդներն են՝ ոմանք իբրև մշտական այցելուներ, թուղթ խաղացողներ, ոմանք պարերի, զուարճութեան սիրահարներ: Շփուճն, խօսակցութիւն, թուղթիկ հայեացքներ, սրտարուխ բացադանչութիւններ... Դահլիճի տարածութեամբ սիրգածեմ քայլում են կանայք իրանց երկար փէշերով, ասեղնագործ կամ թաշեայ զգեստներով. թուչկոտում են դրանց հակից ֆրակաւոր երիտասարդները, անուշ ժպիտով մօտենում, խիստ սիրալիր խօսում... Հաճոյախօսութիւն, քընքշութիւն, նուրբ, շտկուած ձևեր, կիրթ ճաշակ, անուշ ծիծաղ—բոլորը, բոլորը միախառնուած մի ընդհանուր ժխորի մէջ...

Բուն խրախճանքը սկսվում է բաւականին ուշ, երբ դահլիճը պատոււմ են իրանց ներկայութեամբ քաղաքի առաջնակարգ տուգերը: Այդ ժամանակ սկսվում է ներկայացումը, համերգը կամ երգը կամ պարը: Տենչերի արտայայտումը, տրամադրութիւնների փոխանակումը այդ ժամանակ աւելի է աչքի ընկնում, խորանում և այդպէս մինչև առաւօտ...

Չուարճութիւնն անծայր, անսահման: Բացվում է վարագոյրը, բազմատեսակ ճաշակի, տրամադրութեան խաղեր... Նուագում է ջութակը, դիւթում է զաշնամուրը, կլկլում է երգը, փայլում են ժպտադէմ երգիչները, շանթում են կօկետաւոր երգչուհիները... Բոլորը, բոլորը մի նպատակ ունեն՝ զուարճացնել այդ բազմատարր թիֆլիսի beau monde-ը: Դաշնամուրը կորզում է իր ելևէջներով հանդիսականների ծափերը. երգչուհին իր ձայնով, մանաւանդ աւելի իր զգեստով, ազատ շարժումներով ծայր գագաթին է վերասլացնում լարուած տրամադրութիւնները... Յետոյ միւսը. իջնում է վարագոյրը... Թնդում են ծափերը, գոչիւնները... սկսում է անցուդարձը, քննադատութիւնը... Եւ մար-

դիկ բացում են իրանց սրտերը... Գեղեցկութեան երկիրպագունները թեանցուկ պտտում են իրանց հաւանածների հետ... Այստեղ խտրութիւն չկայ: Գեղեցկութեան սիրահար է ամեն մէկը՝ և՛ հասակաւորը, և՛ երիտասարդը... Եւ այդպէս միշտ, տօներին մանաւանդ, խի բարեգործական նպատակով կազմուած երեկոյթներին՝ ևս առաւել... Ժխոր, ժխոր, ժխոր...

Նոյնը և այսօր. Եւում է կեանքը: Սիրուն օրիորդներն իրանց սեղանների առաջ են. մէկը ծաղիկ է առաջարկում, միւսը թէյ է լցնում, երրորդը կօնֆիտտի թափում... Դահլիճի մի ծայրից դէպի միւսը առաջարկ է, խնդրել է, շեշտ է՝ «բարեգործական նպատակով է»... զրանից է կախուած դպրոցի ապահովութիւնը, 120 աշակերտի կրթութիւնը. «Տուէք, տուէք, մօտեցէք, գնեցէք»... Բոլորն էլ համակրութեամբ են տրամադրուած, թէ բարի գործ են անում: Բօպէները թուչում են և հայեացքները կլանվում... Թեանցուկ, սիրալիր, շնչասպառ, հոգեզմայլ հայեացքներ. մի խանդարէք... Արագօրէն դահլիճ մտաւ կարգադրիչ կանանցից մէկը: Դիլի մազերը երկու թանձր մասերի էին բաժանուած և փնջաձև թափուած ականջների վրայ: Դէմքի վրայ Երևում է մի մեծ հարցական նշան: Այս բօպէին նա կասայի մօտ էր. անմխիթար է դրութիւնը: Ինչո՞ւ: Ընկերութիւնը մեծ ջանք է թափել, կանայք շատ են ստք տուել, բայց երեկոյթը աջողուածներից չէ... Ժամը 11-ն է, բայց ցանկալի տուգերը չկան, այսօր քիչ են... Նա սխալուած չէ: Նա միշտ ասում էր՝ «շաբլօն է, միշտ նոյն ձևը, նոյն վիճակախաղը, համերգը...»: Նոր բան, մի նոր բան... Բայց լսող չեղաւ... Կաւ, լաւ, ոչինչ. այնքան էլ վատ չէ. ծախսերը հանուած են... Ա, այդ հիւրը, եկաւ, նայեց նրան... Ա, նա չափազանց դուրեկան տղամարդ է. սրան առանձին հրաւէր է ուղարկել:

պատուէլ է... Ա՛, իմ ամուսինը որտեղ, սա որտեղ...  
Շուտով գնամ, եթէ ոչ՝ մեր այդ նոր երգչուհին սրան  
կը գրաւէ... Այո, երգչուհի Մաղլէնը, ո՛, վտանգաւոր  
ախոյեան է: Նա նրան կը կլանէ... այժմ օրուայ հերո-  
սուհին է...»: Ո՛չ, Մանիշակը այնքան էլ խամ չէ. նա  
չի թողնի, որ մի պատահական երգչուհի իր հակառա-  
կորդը հանդիսանայ...: «Երգում ես, երգիր, բայց չափո  
ձանաչիր...»: Նա ժպտաց, գնաց...



Դահլիճը ետում է: Ժխորը թնդացել է, բոլորը  
տրուել են մոռացութեան. ոգևորութիւնը ուռձանում  
է. վազում են մէկ-մէկու ետեից, մտնում են կից սե-  
նեակներ, խուսափում են հետախուզող հայեացքներէից:  
Որտեղից լոյս ընկաւ կարգադրիչներէից մինը՝ յայտնի  
կարճահասակ զեղեցիկուհին: Գլորվում է նա՝ սիրուն  
գեղանկար գնդակի նման... Օ՛, նա շարունակ ծաղիկ-  
ների վաճառքով էր զբաղուած. գիշերն անցնում է,  
բայց նա չի տեսել ոչ ոքի: Ո՛րտեղից նա յանձն առաւ  
այդ անշնորհակալ գործը... Բարեգործական նպատակ,  
հը՛... Այդ բարեգործական նպատակի շնորհիւ նա չկա-  
րողացաւ գէթ մի անգամ մօտենալ իր ուզածին: Բայց  
նա բանկի կառավարիչ է. քիչ բան է... Իսկ եթէ...  
Ահն արդէն նա մօտենում է տիկին Սօնիկին... Օ՛,  
այդ Սօնիկը քսան մարդ պիտի ձեռք զգէ. քիչ են իր  
ունեցածները... Մի ամիս առաջ թողեց դերասանին,  
ամբողջ ամառ ամառանոցում պրիստաւին էր ճանկել,  
հիմա...: «Ձէ, շնորհակալ եմ, տեսնե՞ք ո՞վ կը յաղթէ...  
Իմ կառավարիչը լրար սակորների և կեռ բթի երկրպա-  
գու չէ... Ո՛րտեղից ընկայ այս կրակի մէջ: Էլ ոչ մի  
լալեգործական երեկոյթի մէջ չեմ խառնուելու...»: Անցաւ մի ուրիշ գոյգ, մի կիսլանջ կին մի ու-  
սուցչի հետ թեանցուկ:

— Դա էլ դժգոհ է մարդուց... Տէր Աստուած, այդ

ամուսնացած կանանցից ճանապարհ չի մնում, էլի՛...  
Դրանք բոլոր ասպարէզը կլանեցին: Մարի, տեսնում  
ես...

— Ինչպէս չէ, կիզիկ. նրանք ճարպիկ են. մենք  
չենք կարողանում. շնորհ չունենք. ինչ անենք որ օ-  
րհորդներ ենք... Բայց, բայց այդ սրտեղից լոյս ըն-  
կաւ... Ըն, մի ոմն երգչուհի... Նա այստեղ իշխում է...  
Տես, տես, բոլորի աչքերը նրա վրայ են... Հինգերորդ  
աղամարդն է մօտենում: Դեռ փունջ էլ է օտացել...  
Օ՛, այս ինչ բախտաւորութիւն է... Երկու օր չկայ,  
ինչ որ ասպարէզ է եկել, և այդքան ծանօթութիւն...  
Ձէ, ես ևս պէտք է ձայնիս վրայ ուշադրութիւն դարձ-  
նեմ... Ի՛նչ լաւ է բեմը, ինչ հիանալի... Իջնում ես  
բեմից, տղամարդիկ ձեռք են մեկնում, օգնում են իջ-  
նելուց...

Եթէ ինքն էլ սովորէ երգել... Հետաքրքրական է՛  
ո՞վ կը վերցնէ նրա ձեռքը իջնելուց, ո՛, շատ հետաքր-  
քրական է... Միայն դատարկ-գրպաններից չլինի...



Մաղլէնը կանգնած է մի անկիւնում և չի կարո-  
ղանում խուսափել տղամարդկանց հաճոյախօսութիւն-  
ներից: Մի ժամ աւել է, որ նա երգել է ընկերութեան  
համերգում, և չի աջողվում անցնել մեծ դահլիճը...  
Որքան դժուար է խուսափել այդ երկրպագուններից:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ... Որքան քընք-  
շութիւններ... թողէք գոնէ... Բայց ոչինչ, ոչինչ...  
միայն դեռ չեմ կարողանում, չեմ հաշտվում այդքան  
փայփայանքների հետ...

Նա երկար վիճեց հօր հետ, մինչև որոշեց ձրի  
մասնակցել ընկերութեան երեկոյթին... Որքան նրան  
ծախս նստեց, այդ յիշել նա չի ուզում: Իր համերգից  
մնացած 20 բուրլին նա տուաւ և մի նոր շոր կարեց.  
Խօ չէր կարելի Արտիստականում նոյն զգեստով երգել,

որով նա հինգ անգամ արդէն երգել է... Նա, խնդրեցին, նախագահ-հոգաբարձուն ինքն եկաւ... Ի՛նչ անէ, երես է պէտք մերժելու... Գովում են, փաշաքանդներ են շռայլում. Տէրը իրանց հետ Համերգից յետոյ համոզուեց, որ... Հասկանում էք... Գուք կարծում էք, որ նա տարվում է էթանագին դափնիներով... Ո՛չ, նա գիտէ այդ ձրի, շռայլ գգուանքների արժէքը. նրանք նոյնն են, ինչ որ գեղեցիկ աղջկայ մարմնի համար թափուած գգուանքները: Ո՛չ, նա չի կարող խարուել այժմ այդ ծափերից, երկրպագուների գովեստներից: Բայց սա կը լինի վերջինը, վերջինը. առանց վճարի՝ ոչ երբէք...

Լսում էք գովեստները... Բայց ոչ որ չի առաջարկի նրան նիւթական նպաստ, նոյն իսկ փոխառութեամբ: Ո՛չ, նա արդէն չի հաւատում, որ լսկ տալանդը կարող կը լինի գրաւել...

Նա իրան զգում է մենակ: Աւելի լաւ է գնայ տուն: Նա շարժում գործեց, սակայն դարձեալ չաջողուեց: Նրան մտեցաւ ընկերութեան անդամներից մինը:

—Շնորհաւորում եմ, օրիորդ, այսօր շատ լաւ երգեցիր... Ախ, եթէ մէկը գտնուէր. մի՞թէ ոչ մի հնար չկայ... Գուք դուր էք եկել շատ-շատերին... Ափսոս որ ես միջոց չունեմ...

Մտեցան մի քանի մարդիկ:

—Գիտէք,—շարունակեց առաջինը,—այսպէս կարելի է անել. հարուստներից սպասելու չէ. էլի օգնէ, մեղպէսը օգնէ... Հաւաքուենք մի 20 մարդ, 10—10 մանէթ տանք... Օրիորդ, ձեզ շնտ է հարկաւորը Ասում են՝ երկու տարուայ նպաստ. ախր, սա ի՛նչ բան է որ...

Մաղլէնը լսում էր, երբեմն ժպտում էր, կանգնած տեղը շարժում էր գործում: Նա պատասխանում էր հատ-հատ...

—Բայց դուք շատ զարմանալի էք երգում:

—Օրիորդ, սրտեղ էք սովորել: Ասում են՝ մի երկու տարի էք միայն սովորել:

—Շնտ է ձեզ պէտք վերջնական կատարելագործման համար:

—Երկու տարի:

—Ինձ թւում է, օրիորդ, որ դա չնչին բան է. դուք լաւ չէք աշխատում... Ձեր հայրն ունի այնքան ծանօթներ:

Տղամարդիկ ցրուեցին, մտեցան կանայք:

—Այդ ինչ է. բոլոր տղամարդկանց գրաւել էք.— մտեցաւ կարգադրիչ տիկիններից մինը.—քիչ էլ մեզ համար թողէք... Օ՛, դուք վտանգաւոր ախոյեան էք...

—Ձեր մազերը լաւ չեն սանրուած, գնացէք ուղղեցէք. երեսներդ էլ շատ է այրվում, կարմրած է, քիչ պուդրա արէք...

—Գնանք ուրօրնի. չէ՞ք գալի. մենք գնացինք...

Կանայք թռչկոտալով հեռացան: Մաղլէնի յուզմունքը սաստկացաւ:

Այդ տիկինը,—մտքով ասաց Մաղլէնը,—սրտացաւութիւն է ցոյց տալի: Հը՛, երեսս կարմրած է... Անցեալ տարի հրաւիրում էին մի երեկոյթի մասնակցելու, սա էր, որ ասում էր՝ «պէտք է փորձել նրա ձայնը. ես պիտի լսեմ, թէ ինչպէս է երգում, և ըստ այնմ...»: Սակայն ամեն կերպ աշխատում էր հեռացնել, հասկանում էր, միայն նրա համար, որ Մաղլէնին մասնակցելու խնդրում էր տիկնոջ հոմանիւններից մինը: Նա շատ վշտացաւ և ուզում էր չերգել. նա այդ դէպքը դեռ ծածկեց հօրից. իսկ այժմ սրտացաւութիւն է արտայայտում:

Մաղլէնը, մնալով մենակ, ուզեց քիչ անցնել: Սակայն մէկը մտեկում է նրան:

Աղգային գործիչներից է, բարձրահասակ, գեղե-

ցիկ մի տղամարդ, օսլայած շքեղ շապկով: Մի սիրալիր ժպտով և առանձին շեշտով ասաց.

— Օրիորդ, նախ և առաջ իմ հրձուանքս եմ յայտնում. շատ լաւ երգեցիր: Բայց ես ձեզ դիմում եմ մի խնդրով: Մեր աղքատ դպրոցը երեկոյթ է կազմում. երկու ամսուայ ոտձիկները ուսուցիչներին չեն տրուած... Սպասեցէք, ես գիտեմ, որ ձեզ ուղղակի շահագործում են: Այս պիշեր էլ, ասում են, ձրի էք երգում... Ո՛չ, ո՛չ, ես ասացի, որ ձրի չեմ հրաւրի. գիտէք, ի հարկէ, աղքատ դպրոց, ես ասացի, որ 5 բուրլի ձեզ տան, գոնէ ձեր ձեռնոցները, կառքի ծախսն էլ է կը հանէք: Չեն հասկանում, ինչ անենք, տգէտ մարդիկ են ընկերներս. ուզում էին օր. Ստեփանեանին հրաւիրել, ես ձեր կողմը պահեցի:

Մադլէնի շունչը կտրվում էր: Ահա առաջին վարձատրութեան առաջարկը, որ նա ստանում է... Այդ էլ նրա նեղ օրերում մի բան է: Այս անգամ շոր կարելու բան չի լինի. նա հէնց... այս հինգ բուրլին կը տայ բօտինկաների պարտքին: Այսօր այդ բօտինկաներն առաջին անգամ է հագնում. երեք բուրլին տուել է, մնացել է պարտք ուղիղ հինգ բուրլի: Պէտք է գոնէ այնպէս անել, որ այդ հինգ բուրլին էլ է տրուի: Այո, հոգաբարձուն նորից պնդեց, որ հինգ բուրլին էլ փող է: Տէր Աստուած, նրա աշխատանքը վարձատրվում է, վարձատրվում է...

Նա անցաւ հոգաբարձուի հետ կից սենեակը: Նա մտածում էր, որ այժմ ճանապարհը հարթվում է. վաղը միւս օրը նա կը պահանջէ 15 բուրլի, 20 կամ 50 բուրլի... Դեռ այդ 5 բուրլին ընդունէ:

Առանձնասենեակում Մադլէնը պատահեց երեկոյթի կազմակերպիչ-նախագահին, որը հրաւիրեց նրան ընթրիքի: Նախագահը շատ սիրալիր առաջարկ արաւ.

նրա իւրաքանչիւր խօսքը շոյում էր Մադլէնի սիրտը: Հոգաբարձու-նախագահը պատմեց, որ ինքը երկրպագու է արուեստին, մանաւանդ երգին: Թիֆլիսի եղած, երգչուհիներից ոչ մէկի ձայնը այնպէս չի հաւանում, ինչպէս օրիորդինը: Դրանք բոլորը առանց տեմպերամենտի են երգում: Երգեցողութիւնը դժուար բան է. այստեղ միայն ձայն ունենալը դեռ անպայման գրաւական չէ. պէտք է ունենալ լսելիք, տեմպերամենտ, զգացմունք... Յետոյ նա ասաց, որ Մադլէնի սեփական համերգից նա այնքան գոհ է մնացել, որ մինչև վերջ մնաց, որպէսզի լսէ օրիորդի նաև հայերէն երգերը... և որքան հիանալի էր «Ո՛հ, ինչ անոյշը»... Յաւում է, որ չի սպասել այդպիսի աջողութիւն, եթէ ո՛չ նա փունջ կը բերէր: Նա իր մեղքը քաւել է և փունջը մատուցել է այսօր... այսօրուայ հրաւերին էլ նա է պարտական:

— Դիտէք, օրիորդ, Արտիստականում երգելը մեծ բան է. այստեղ ամեն մարդու չի աջողվում ոտ դնել: Այստեղ լինում է Թիֆլիսի beau monde-ը. իսկ դրանից շատ բան է կախուած: Ես կաջողեցնեմ, որ ձեզ հրաւիրեն այստեղի հերթական օպերային ներկայացումներին...

Ի հարկէ, ի հարկէ, — անցնում էր Մադլէնի մտքով, — տաղանդը չի կարող չգնահատուել: Այո, ափսոս հայրիկը այստեղ չէ և չի լսում: Այժմ Մադլէնն արդէն համարվում է ուշադրութեան արժանի երգչուհի: Ահա թէ ինչ է նշանակում Արտիստականի մասնակցութիւնը: Եւ անցան այժմ տատանումները: Դժուար էր մինչև այդ աստիճանը, իր համերգը, լրագիրները կարծիքը, Արտիստականի մասնակցութիւնը... Ապագան իրանն է, ապագան իրանն է...

Խօսակցութիւնն երկար տևեց: Անցուղարձ անող կանանց և օրիորդների նախանձոտ նայուածքները կարկուտի պէս տեղացին նրա գլխին: Հասկանում էր այդ հայեացքների շարժառիթը: Մի ոմն երգչուհի խօսում է

քաղաքի յայտնի տուգներից մէկի հետ: Նա 5000 բուբլի  
տոճիկ է ստանում, ունի իր սեփական տները, ինքն  
էլ... կնոջ հետ չի ապրում: Հարկաւոր է մի քաղցր  
ժպիտ, և օրիորդը բախտաւորուած է... Ո՛չ, ո՛չ, մի  
զարմանալի բախտի տէր է. Ֆիլ, երաժշտի աղջիկ. հը՛,  
իսկ բախտին նայէ: Տեսէք փունջը ինչպէս կօկետարար  
է հոտոտում...

Ահա երեկոյթի հմայքը: Նա դեռ զգում է, որ  
այսօր այնքան էլ տրամադրուած չերգեց, բայց այդ  
գովեստները ջերմացնում են նրա սիրտը: Նա նոյնպէս  
նկատում է նախանձոտ հայեացքները. մի կին մինչև  
անգամ նրան մօտեցաւ:

—Մադլէն, մի րօպէ գմս. քեզ բան ունեմ ա-  
սելու...

Ո՛չ, նա չի մօտենայ, նա գիտէ այդ մի րօպէի  
հրաւէրը ինչ զրդապատճառներից է առաջ գալիս: Տե-  
սէք՝ նրա հետ էլի մի քանի օրիորդներ... Ո՛չ, նա  
այժմ զբաղուած է:

—Ասացէք հէնց այստեղ, — ասաց նա, — գաղտնիք  
չունեմ:

Օրիորդները կտարուած յետ քաշուեցին: Մադլէնը  
լսեց, թէ ինչպէս մէկը նոյն իսկ քրթմնջաց, միւսը  
ծիծաղեց, և նրա ականջին հասաւ:

—Չաջողեց բաժանել: Այնպէս չի ճանկել:

Նախագահը նստած էր նրա դիմաց, աջ ձեռքը  
դրած գրպանը և սպասում էր օրիորդների հեռանալուն:

—էլի էրբ էք մտադիր համերգ տալու, — հարց-  
րեց նա:

—Այլ ևս ոչ մի տնգամ. կը սպասեմ որ կատա-  
րելագործեմ ձայնս, յետոյ...

—Գիտէ՞ք, ես ձեզ խորհուրդ կը տայի ժամանակ  
չկորցնել, գտնել մէկ բարերար. ինչ է որ, ձեզ հար-

կաւոր կը լինի շատ-շատ 2000 բուբլի:

—Բայց սրտեղից, երբ չի ճարվում:

—Հեշտ է:

—Հեշտ է, բայց չեմ կարողանում ճարել:

Ընթրիքը հասարակներից չէր: Բերին տապակած  
ճուտ, ֆիլէ, միլոգ, լիմօնադ, գինի: Նախագահը սիրա-  
լիր կերպով ածեց գինին, առաջարկեց: Մադլէնը մեր-  
ժեց գինին, ընդունեց լիմօնադը:

—Ձեզ հետ երգեց և օր. Ստեփանեանը: Բանի  
նման չէ, տեմպերամենտ չունի: Դուք... Ի՛նչ համե-  
մատութիւն...

Մադլէնը փունջը դրեց սեղանի վրայ, վերցրեց  
դանակը, կտրեց միսը... Նա ուրախ էր, աչքերի մէջ  
փայլը սաստկանում էր, պարզեցնելով նրա ամբողջ ար-  
տայայտութեան մի սքանչելի և վառվռուն գոյն:

—Խմեցէք մի բաժակ գինի, սա շատ լաւն է...

Աստուած կարժանացնէ, մի-երկու տարուց յետոյ ձեզ  
կը լսենք Արքունական Թատրօնի բեմից: Անխրագոր-  
ծելի չէ: Դուք մեր բոլոր երգչուհիներին կը գերազան-  
ցէք: Դուք սրտեղ կուզէիք սովորել:

—Դո՛նէ Պետերբուրգ, որովհետև Պարիզը անմատ-  
չելի է:

—Ինչո՞ւ. կարծում էք Պարիզ ապրելը աւելի՞  
թանկ է. չկարծէք. միւնտյնն է, ինչ որ Պետերբուրգ:  
Բերին սուրճ: Խօսակցութիւնը նոյն նիւթի շուրջը  
պտտուեց երկար:

—Այո՛, այո՛, մենք ձեզ կը տեսնենք Արքունական  
Թատրօնի բեմի վրայ: Երկու տարին աննկատելի  
կանցնէ...

Նախագահը որպէս թէ անզուշտութիւնից դիպաւ  
Մադլէնի ձեռին: Մադլէնը վեր թռաւ. այդ բանը ան-  
նկատելի չմնաց նախագահի կողմից:

—Այո՛, այո՛, գտնվում է մէկը և...

—Օ, չեմ հաւատում. այժմ շատ դժուար է բարերար գտնելը:

—Իսկ եթէ ես ձեզ համար գտնեմ... Գիտէ՞ք, այստեղ մէկը կայ...

—Այստեղ,—հետաքրքրութեամբ հարցրեց Մադլէնը:

—Ինչո՞ւ էք դարմանում... Ձեզ ասում եմ՝ սա Արտիստիկ Ընկերութեան դահլիճն է. այստեղ են լինում արուեստի սիրահարները: Եւ ես կարող եմ աչոյզեցնել...

—Դուք կատակ էք անում:

—Ինչո՞ւ: Միթէ դուք չէք գտնում ձեր մէջ լուրջ արժանիքներ:

Մադլէնն աչքերը հանդարտ ցած գցեց: Նա մի անտովոր հայեացք նկատեց նախագահից:

—Գիտէ՞ք, օրիորդ, երգչուհին, դերասանուհին պիտի ազատ լինի նախապաշարմունքներից,—հանգիստ կերպով շարունակեց նախագահը:—Ի՞նչ է երգչուհին: Նա պէտք է անպայման ունենայ դիրքաւորներից մէկի համակրութիւնը... Բոլորն էլ այդպէս են... Այստեղ պէտք է կաշառել ուսանողներին, ունենալ նուէրներ, ծափահարողներ... Ամեն ինչ կախուած է նրանից, թէ ո՞վ է դրանց կազմակերպում. իսկ այս դէպքում նշանակութիւն ունի...

Նա իջեցրեց ձայնը և շատ սիրալիւր քնքշութեամբ վերցրեց օրիորդի ձեռքը այն բոլէին, երբ Մադլէնը ուզեց փունջը վերցնել սեղանի վրայից: Մադլէնը ցնցուեց. նա զգաց, որ սառում է երեսը, իսկ սրտի տակ մի աներևոյթ ձեռք ուժգին հարուած հասցրեց: Նա կարող էր միթէ սպասել այդպիսի դատողութիւն ըստ երևոյթի մի լուրջ մարդուց, մի կուլտուրական հիմնարկութեան նախագահից: Ուզեց մի հարց տալ, սակայն խօսքերը չէին դուրս գալի: Նա մոռանում էր նոյն իսկ ասելիքը, որը մի բոլէ առաջ ծագում էր նրա

պիտում: «Երգչուհին էլ մարդ է, տէրը իր տրամադրութիւնների» — ուզեց նա միայն ասել, բայց չկարողացաւ: Տեսնե՞ք այնու ամենայնիւ ո՞վ է այդ մարդը. դուցէ նա սխալվում է: Նախագահը ժպտալով կճպեց խնձորը, վերցրեց դանակի ծայրով մի կտոր և տուաւ Մադլէնին: Մադլէնը վերցրեց և պահեց ձեռքում: Նա չի կարողանում մի խօսք ասել ի պաշտպանութիւն իր անսակետների... Իսկ նախագահի աչքերը վառվում են, վառվում են, վառվում են...

—Այդ մարդը յանձն կառնի,—ասաց նա,—տալ ձեզ երկու տարուայ ապահովութիւն: Ուզում էք՝ նոյն իսկ գնացէք Պարիզի կոնսերվատորիան... Նրա համար երկու-երեք հազարը ոչինչ բան է... Մտածեցէք, միթէ սա վատ է... Դուք միայն պիտի որոշէք հրաժարուել նախապաշարմունքներից... Ձեր միակ յայտը—ն բաւական է...

—Մադլէնն աւել չկարողացաւ լռել. նա բացադանչեց.

—Ո՞վ է այդ մարդը:

— Ձեր խոնարհ ծառան, ձեր փայլուն տաղանդի, հրեշտակային գեղեցկութեան հլու երկրպագուն, ձեզ այդ փունջը մատուցանողը... Առաջիկայում դուք ինձնից կը ստանաք մի փառաւոր ծաղկեայ քնար... Հաւատացէք, որ ձեզնից մեծ դոնաբերութիւն չեմ պահանջում... Բոլորը կեղծ-պայմանականութիւններ են...

Մադլէնը հպարտութեամբ վեր կացաւ. թողեց նոյնիսկ փունջը սեղանի վրայ:

—Ներեցէք, դուք վերաւորուեցի՞ք. ես խօսքս յետ եմ աւնում... Բայց դուք ցոյցեր մի անէք. այստեղ նայում են. փունջը վերցրէք...

Մադլէնը վերցրեց փունջը, հեռացաւ խիստ դժգոհ, մեքենաբար պարզելով իր ձեռքը: Բաղմածիւ աչքեր ուղղուեցին դէպի նա:

—Շնորհակալ եմ,—ասաց նա:

Մտնելով դահլիճ, նա պատահեց այն պարոնին, որը առաջարկում էր հինգ բուբուլով երգել:

—Օրիորդ... ներեցէք... դուք գնում էք...

—Այո:

—Չէք կարող քիչ մնալ. մենք այս բազէիս պիտի վճռենք երեկոյթի օրը, ձեզ էլ ի դէպ կը հաղորդենք...

—Ո՛չ, ո՛չ, ես չեմ երգի:

—Ինչո՞ւ, քի՞չ է 5 բուբուլն. նո՛ւ, կաշխատեմ աջողեցնել 10.

Եթէ մի խօսք ևս ասուէր, Մադլէնը պիտի մեծ վիրաւորանք հասցնէր. բոլորը, բոլորը թափէր այդ կեղծ-արուեստասէրներին գլխին, բայց... Մադլէնը կարիք չհամարեց: Նրա համար պարզ է. առաջ գնալու, խրախուսանք գտնելու համար այդ հասարակութեան շրջանում՝ պէտք է ապրել սրանց կեանքով... Իսկ ի՞նչ է դրանց կեանքը... Բաւական է, նա այժմ գիտէ...

—Վերցրէք 10 բուբուլ, օրիորդ, այդ 5 բուբուլն էլ ինձնից եմ տալիս...

Մադլէնը ծիծաղեց:

—Որոնեցէք ձրի երգչուհիներ:

—Եւ կը գտնուի, օրիորդ, մի զարմանաք: Օր.

Ստեփանեանը քիչ թոյլ կերգէ, բայց կերգէ. ո՞վ է հասկանում: Դուք կարծում էք՝ 10 բուբուլն փող չէ՞: 10 բուբուլով թուրքական երգիչների խումբ է դալիս՝ 6 հոգուց բաղկացած: Մենք բարեգործական նպատակով ենք կազմում, շուայել չենք կարող... Ո՛չ, ո՛չ, — դիմեց նա մօտը կանգնած ընկերոջը, — Սիմօն, աւելի լաւ է այդ կտորը թողնենք. թող երգ չլինի. 10 բուբուլն էլ դրպաններումս կը մնայ. 10 բուբուլով երկու աշակերտ կարելի է հագցնել...

Այլևս ինչ խօսեցին, Մադլէնը չլսեց. նա արդէն հեռացել էր: Եթէ նա լսէր հօր խօսքը, չէր էլ լինի այստեղ եկած: Բայց նրան ասացին՝ Արտիստիկի կարծիքը մեծ նշանակութիւն ունի... Ո՛չ, նա չի կարող

համաձայնուել նամուսի վաճառքին: Ինչո՞ւ, ինչո՞ւ նա այստեղ եկաւ: Հասկան՞ում էք, ինչպիսի զոհաբերութիւն են պահանջում... երկու-հազար բուբուլի են տալիս...

Նրան թուաց, որ էլեքտրական լոյսը նուազում է, հանգում է... Մի՞թէ հանգում է... Սոսկալի է...

—Ցոյց տուր գոնէ փունջը, — ասաց այն օրիորդներից մինը, որը սեղանի մօտից ուզում էր հեռացնել Մադլէնին: — Ի՞նչ չէս թողնի մէկ ծաղիկ հանեմ, այ, այդ փոքրիկը... Չէ... Ի հարկէ, հասկանում եմ, երգչուհու համար փունջը, ինչպէս պատանու համար բխերը...

Այդ ցոյցը Մադլէնին թուաց շատ վիրաւորական: Յանդուգն... Սակայն նա մի չոր հայեացք զցեց և մի արհամարհական շարժումով շուռ եկաւ ու անխօս հեռացաւ:

—Օհօ... ինչ մեծամտութիւն, — հեղինակին նրան. — երգչուհի է դարձել, այլ ևս իրայիններին չի ուզում ճանաչել...

Մադլէնը սանդուղների վրայ է: Այստեղի շքեղ հայելիները անդրադարձրին նրա պրօֆիլը, բայց Մադլէնն այդ չնկատեց: Միայն՝ երբ իջաւ մի քանի աստիճան, մերենաբար աչք զցեց դիմացի հայելուն և ցնցուեց... Օր. Ստեփանեանը կանգնած էր հայելու առաջ և խօսում էր նախագահի հետ: Օրիորդի աչքերը վառ ցայտում էին մի բոսորական ցոլքով, երեսի ժրպիտը արտայայտում էր իր սեռի բուռն հեշտանքը...

Մատլէնը շունչը հազիւ դապեց, բունքերի մէջ զարկեր զգաց: Սանդուղի վրայ անդադար իջնում ու բարձրանում էին: Մէկը մօտեցաւ և առաջարկեց իր պատրաստականութիւնը ճանապարհ զցելու: Մադլէնը մերժեց, խնդրեց միայն կառք կանչել...

Ճանապարհին քիչ ֆնաց լաց լինի: Հայրիկի ասածները... բայց Մաղէնը միշտ ջրում էր, ջրում էր, հնացած դադափարներ էր համարում... Իսկ ա՛յժմ... Չէ՛ն կատարվում նրա ասածները... Նրա ճանապարհը փռուած է... Եթէ նա վճռի ոտնատակ տալ... Ի՞նչ են դրանք. լոկ նախապաշարմունքներ... Նախագահը պատրաստ է տալ նոյն իսկ 3000 բուրլի, հասկանում էք, 3000 բուրլի, գուցէ և աւել...

Տան դուռը բացեց հայրը:

—Օ, փունջ ես ստացել, շնորհաւորում եմ: Ուրեմն աջող էր...

—Վաղը կը խօսենք, հայրիկ, գլուխս շատ է ցաւում, շատ յոգնած եմ...

Նրա գլուխը պտտվում է... Օ, այդ թախտն էլ ինչ անտանելի է ճրթում... Տատն է ուրեմն հիւր եկել, շարունակ շարժվում է անկողնում... Գոնէ հանգիստ ընէ... Գոնէ ընէ... ընէ... Սակայն նա չի կարողանում ընել: Նա զգում է գլխի մի անտանելի ցաւ. այժմ կողքերն էլ են ցաւում՝ անկողնում շարունակ շուռ ու մուռ գալուց: Ահա թէ ինչ տեսաւ նա, ինչ խոստացան նրան գեղարուեստի սիրահարները... Պէտք է քեզ ծախես... Մի քայլ է միայն. ընդունէ, և այն ժամանակ երկու տարուց յետոյ նա ոտք կը դնէ Արքունսկան թատրօնի բեմի վրայ... Այն ժամանակ յայտնի, փայլուն ասող... Չգուցիւնէր... Բայց ինչ անէ, երբ նա բռն կերպով ցանկանում է կատարելագործուել... Ասացէք, ասացէք...

Եւ դարձեալ նա շուռ-մուռ եկաւ մահճակալի վրայ: Ուրեմն ամեն մի գեղեցիկ դադափար, անմահ գործ պէտք է գնահատել քմահաճոյքով, անձի գնով... Յետոյ... Ապա ինչո՞ւ են նրան մինչև օրս հաւատացրել, որ մեր մէջ ծաղկում է գրականութիւնը, թատրօնը, երգը... Տուէք ուրեմն տաղանդին դարգանալու միջոց: Միջոց... Իսկ օրիորդ Ստեփանեանը... Միթէ...

Նրա ձայնը... նա նոյն իսկ հազիւ է վերցնում վերին բեգիստրի sol-ը, ձայնն էլ միշտ երեւում է, բայց սովորել է չորս տարի... Իսկ նրան ասում են, որ նա էլ կերգէ. ո՞վ է հասկանում այդ նրբութիւնները... Կերգէ... Նա սեղմեց բարձր և ուժգին հարուածով նորից գնդացրեց: Նա խեղդվում է. օդ, օդ, օդ... Նորից ճրթում է թախտը... Տատը, այո՛, հիմա տատը պիտի ասէ, որ «դու սխալուած ես»... «ակտրիսաների վերջը այս է»... Տէր Աստուած, խփեցէք երեսին, ասացէք, որ գեղարուեստի սիրահարներ ենք... Նո՛ւ, գոչեցէք... Ես պահանջում եմ... Դուք պնդում էք և գտնում, որ գեղարուեստի իւրաքանչիւր արտայայտութեան մէջ նոր կեանքի ցնորքներ կան... Եթէ այո՛... ուրեմն, ասացէք, ասացէք, որ ես սխալուած չեմ...

ԳԼՈՒԽ Ե.

Տատի աղմուկը արթնացրեց Մաղէնին:

—Վեր կաց, Մաղէն, վեր կաց, ժամանակ է:

Մաղէնը բացեց աչքերը. տատը նստած է թէյի սեղանի առաջ: Նա խոժոռուած է, դժգոհ է: Ըստ երևոյթին՝ նա ուզում է խօսել Մաղէնի հետ: Դիտէք նրա անհամբերութեան շարժառիթները: Նա, այո՛, Մաղէնը յիշում է. գիշերը եկաւ ուշ, այն ժամանակ, երբ պառուը քնած էր: Բայց Մաղէնը չի կարողանում բարձրանալ:

—Ո՞ր ժամն է:

—11 ժամն է արդէն,—պատասխանեց տատը:

—Քիչ էլ քնեմ: Կէս ժամից, տատիկ, վեր կացրու... Գլուխս ցաւում է:

Մաղէնը տեսաւ, թէ տատը ինչպէս ծոյլ կերպով

Թասերը բոլորովին առանց կարևորութեան այս ու այն կողմը դրեց, նկատեց, թէ ինչպէս հանգած աչքերի փոսերը շարժուեցին, և սև աչքերը փայլեցին հողատարութեամբ ու անձնուիրութեամբ: Տատը նորից շարժեց բաժակները, հողոց հանեց և ասաց.

— Բայց թէյը սառչում է:

Այդ ասաց շատ կարեկից ձայնով և այնպիսի հողատարութեամբ, որ դժուար էր պառակից վիրաւորուել: Սակայն Մադլէնը չկարողացաւ սառնութեամբ լսել:

— Ո՛ւՖ. խնդրեմ, հանգիստ թողէք. թէյ չեմ ուզում, — ասաց նա:

Ոչ, տատը չի բարկանայ: Նա գիտէ, որ իր խօսքը բանի տեղ չի անցնելու: Թող ինքը խելքի գայ: Նա միայն կնճռուեց և, պլուխը թեքելով ուսերի վրայ, երկար նայեց իր թոռանը:

Յանկարծ Մադլէնը գլուխը բարձրացրեց և զգալով իր սխալը՝ ուղեց մեղմացնել վիրաւորաքնը:

— Գիտե՞ս, տատիկ, գիշերս շատ լաւ երեկոյթ էր... այնքան բազմութիւն, այնքան բազմութիւն, որ տուն չէի ուզում գալ... Մօտ եկ, տատիկ:

Տատը թափահարեց գլուխը և մօտեցաւ մահճակալին:

— Դու ինձ այդ ասա... խօ գիտես, տատիկ, ի՞նչ է բազէն...

— Բազէն:

— Հն, բազէն:

— Միժաղձում ես:

— Ո՛չ, լուրջ եմ հարցնում:

— Գիտեմ:

— Եթէ բազէն ջարդէ թևերը, ծիտ կը դառնամ...

— Ո՞վ:

— Զարդուած բազէն:

— Երեխայ ես, երեխայ... Ի՞նչ բազէ, ի՞նչ ես խօսում:

— Ի՞նչ բազէ... Երէկ Արտիստականում մի բազէի թևերը ջարդեցին... Բայց նա գիշերը հանգստացաւ, շտկեց թևերը և այսօր ուզում է նորից թռչել...

— Այդ ի՞նչ է մազերիդ մէջ:

— Ի՞նչը... Հն-հն-հն... Դա, տատիկ, չգիտես, կօնֆետաի է:

— Գլխիդ վրայ. չեմ հասկանում...

Մադլէնը յանկարծ նստեց անկողնում:

— Սա այն նետն է, տատիկ, որով ուղեցին բազէի թևերը ջարդել: Տատիկ, տատիկ, ասա, տեսնեմ, կա՞յ արդարութիւն աշխարհիս երեսին:

— Շատ կարելի է որ կայ:

— Չէ, քո կարծիքը:

— Չեմ հասկանում, երէկ ռոտեղ էիր:

— Արտիստականում, տատիկ, Արտիստականում. պէտք է տեսնէիր՝ ինչպիսի մեծ-մեծ մարդիկ էին հաւաքուած, հարուստ, անուանի:

— Էլի երգեցիր: Տեսնում ես, պատասխան էլ չես գտնում: Ախր ի՞նչ բան է այս երգելը, ակտրիսա խօ չէ՞ս...

Մադլէնը նոր շարժում գործեց, այս անգամ աւելի արագ թափով:

— Տատիկ, տատիկ...

— Ի՞նչ ես ասում:

— Ակտրիսաները մարդիկ չէ՞ն:

— Էլ ի՞նչ ասեմ: Անցեալներն ինձ ասացին՝ թող երգել է, կօնցերտ է, ինչ է տուել... Թշնամու լեզուն չտր. չհաւատացի, ի հարկէ... Ո՞ր մէկի բերանը փակեմ. ինչո՞ւ ախր այդպէս լինի:

— Սպասիր, քեզ համար երգեմ:

— Չէ, չէ, գլուխս առանց այն էլ ցաւում է, ի՞նչ է, գիժ խօ չէ՞ս, առանց պատճառի, անկողնում... վեր

կաց, ինքնատուր հանդաւ... մի լուացուիր, երեսիդ խաչ արա... տես աչքերիդ տակերն ինչպէս է կապտել: Այսքան անքուն մնալ կարելի՞ է միթէ...

Մաղլէնը բրթմնջաց ինչ-որ եղանակ:

—Չէ, չէ, ես երգ չեմ սիրում:

—Իսկ ես սիրում եմ:

—Քեզ հարկաւոր է մի լաւ մարդ. ժամանակդ ինչ ես կորցնում. հիմա երեսայ չես. 22-դ անցել է իսկ դու դարդակ-մարդակ թռչկոտում ես, ակտրիսայի նման... Այդպէս—բերանս չի զօրում—քեզ մօտեցողը ո՞վ պիտի լինի...

Մաղլէնը ցած թռաւ մահճակալից, Գիշերային կարճ շրջազգեստի տակից երևացին նրա սև, հասարակ գուլպաները: Այդ անպաճոյճ զգեստով անգամ նա գրաւիչ էր և սիրուն:

Նա սկսեց հագնուել... Օ՛, իրօք, ի՞նչ երկար է քնել...

Յանկարծ Մաղլէնի ականջում խշխշացին երէկուայ աջողուած կտորները: Աննկատելի ընկաւ մոռացութեան մէջ, ձայնը բարձրացաւ, բրթմնջիւնը ձևակերպուեց և ընդունեց կանօնաւոր եղանակ.

Мол-ви, кра-са дѣ-ви-ца,  
Путь намъ ку-да держать?  
Челнѣ мой легкой, какъ птица,  
Вѣтра не на-до ждать,  
Вѣтра не на-до ждать.

—Կամայ, կամայ,—փակեց ականջները տատը.  
—էդ ինչ զիլ ձայն ունես... Մօրդ ես դուրս եկել. երբ խօսէր, այնպէս էր բղաւում, կարծես խուլերի հետ էր խօսում:

—Չհաւանեցիր այս երգը, տատիկ:

—Ես քեզ ասացի, որ երգ չեմ սիրում:

—Բայց ինչո՞ւ երէկ հոգարարձուն ապում էր, որ

«դուք, օրիորդ, շատ լաւ ձայն ունէք»: Չէ, տատիկ, մի նեղանար որ ասեմ. նրանք լաւ են հասկանում: Չեմ հաւատում... էհ... Հայրիկը տանը չէ:

—Ասաց՛ այս բօպէիս գալիս եմ». մի ժամ է որ գնացել է:

Այժմ Մաղլէնը կը լուացուի, կը շտկէ մազերը... Տէր Աստուած, ինչ է նա այսօր խնդում. շարունակ ուզում է երգել. չլինի՞ մի մեկենաս է գտնուում...

—Տատիկ, ինչո՞ւ ես գլուխդ թափ տալիս:

—Աչքդ մի հայելուն պէտք... Գլխիդ մազը չի երևում... Այս ի՞նչ գունաւոր թղթեր են... Ի՞նչ է, երեսաներ էին այնտեղ... Ծիծաղում եմ...

—Չէ, չէ, այդ թղթիկները մեծ-մեծ մարդիկ են պցում:

—Ախր ինչի՞ համար:

—Ասում եմ, որ սա նետ է, նետ. չես հաւատում, ինչ անեմ: Յետոյ՝ գիտե՛ս այդ ո՞վ է պցել գլխիս. 5000 բուբլի է ստանում, բանկի դիրեկտօր է...

Նա թռչկոտալով անցաւ միւս սենեակը լուացուելու:

—Տեսնում ես, տատիկ,—շարունակեց միւս սենեակից,—եթէ ես չերգէի, բանկի դիրեկտօրը ինձ այս պատուին չէր արժանացնի: Նա, նոյն իսկ ինձ ընթրիքի հրաւիրեց:

—Ախմախ, բոյ ես քշել միայն, բայց նոյն երեսան ես մնացել: Մի տղամարդ ընթրիքի քեզ ինչի պիտի հրաւիրէ: Չէ, չէ, քեզ պէտք է ձեռքի մէջ հաւաքել: Ա՛յ, ինչ է նշանակում անմայր մեծացած աղջիկը:

Մաղլէնն այսօր տրամադրուած էր խիստ երգիծական ոգով: Նրան այցելել էր սաւառնող ոգին, մոռացութեան էր տուել երէկուայ դէպքը: Հնա-հնա-հնա,—

բանուեց նա ծիծաղով, — Ինչպէս էր ուզում նրան վարձատրել նախագահը: Միթէ իրօք նա այնքան գեղեցիկ է...

— Նայենք հայելուն... Չեմ նկատում... Այստեղ էլ ինչ-որ պզուկ է դուրս եկել...

Նա պտոյտ գործեց, փեշը բարձրացրեց և նորից գցեց ցած... Գեղեցիկ... Առանձին բան չի նկատում... Բայց ով կը հասկանայ տղամարդկանց հոգեբանութիւնը...

Մաւանոյ ոգին թողեց նրան... Մադլէնը նորից փոխուեց: Նա համակուեց տխրութեամբ: Մօտ 10 բօպէ, երբեմն-երբեմն միայն խառնելով բաժակի թէյը, Մադլէնը մնաց անխօս: Եկան հայրը և Իվան Պետրովիչը: Խօսեցին, նորից քրքրեցին վշտերը: Անախորժութիւններն անխուսափելի են: Պէտք է գործել, դրանց չնայել...

— Ա՛յ, այս գիշեր պէտք է այդ վախը նուագեմ, — ասաց Իվան Պետրովիչը, — բայց այստեղ մի կտորը դուրս չի գալի: Սարգիս, ջութակդ մի վերցնէ...

Իվան Պետրովիչը հանեց վերարկուի գրպանից կարմիր թաշկինակով փաթաթած կլարնետը, միացրեց նրա երկու կտորը, նախապէս լեզուով թրջելով գործիքի պտուտակը: Յետոյ տարաւ բերանը, փչեց մի քանի անաջող ձայներ. յետոյ նորից սեղմեց վերին մասը, նորից շտկեց գործիքը:

Այս մարդը, — մտածեց Մադլէնը, — երբէք չի թուլացնում իր ոգևորութիւնը, շարունակ շտկում է կլարնետը: Որքան սիրով է կպած նա իր գործիքին: Այդ վերաբերմունքը Մադլէնի սիրտը ճմլում է... Եւ եթէ մարդ սիրէ այդպէս իր գործիքը... Նա փակում է աչքերը... Երանի՛ այս մարդուն, որ բաւականանում է այդքան քշով... Կլարնետը հանում է ինչ-որ անախորժ

կլկոցներ, խփանները (կլապանները) իջնում են անխնայ հարուածներով, արձակում են նօտաներ կիսատ, պոսատ...

Մակայն Իվան Պետրովիչը փչում է: Նա կարմրել է և ընկել մոռացութեան մէջ, փչում է այնպէս եռանդով, կարծես ձուլուելիս լինէր ձայների հետ: Եթէ Մադլէնը կարողանար այսքանով բաւականանալ, ոգևորուել, նա չէր վիրաւորուի նախագահից... Բաւական էր այն էլ, ինչ որ գիտէ:

Բայց ահա և հայրը վերցրեց ջութակը, շարժեց կնտնտոցը, զարկեց լարերին, տակտ տուաւ... Իվան Պետրովիչը շունչ քաշեց. նա տակտը կորցրեց, յետոյ նորից ընկաւ տեղը չորրորդ տակտում:

— Ու՛ֆ, Իվան Պետրովիչ, fis! fis!... fa diese, fa diese!

— Ա՛յ, անտէր մնայ, ճիշտ որ այստեղ մէկ դիէզ է... Բանալիին չէի նայել...

— Մէկ էլ այդ Շ-ն կեղծ է դուրս գալիս:

— Ի՞նչ անեմ, կլարնետս հին սիստեմի է: Նորերը ափսոս չեն. այստեղ Շ-ն խփան չունի, ուղղակի ծակ է, իսկ այստեղ այդ խփանը լաւ չի գործում, անտէր ճկոյթս էլ լաւ չի սեղմում... Դէ, մէկ էլ, խնդրեմ:

Նորից սկսեցին նուագել: Սարգիսը շարունակ ուղղում էր, ոտքով տակտը զարնում:

— Օ՛ֆ, գլուխս, գլուխս, — բողոքեց տատը ձանձրանալով երկար լուռութիւնից, — լաւ. ածում էք՝ ածէք, էս ոտքը ինչո՞ւ էք խփում...

Իվան Պետրովիչը չկարողացաւ զսպել իր ակամայ ծիծաղը... ծիծաղից նա մի անաջող շունչ քաշեց, և կլարնետը մի այնպիսի ճիչ հանեց, որ տատը վեր կացաւ և դժգոհ գնաց միւս սենեակ:

Բոլորն էլ ծիծաղեցին, սակայն իսկոյն զսպեցին իրանց ծիծաղը, զգուշանալով վիրաւորանքից:

— Է՛հ, լաւ, եղաւ, — ասաց Իվան Պետրովիչը, կա-

մենալով խօսքը փոխել:—Մադլէն ջան, պատմիր, քնն-  
պէս անցաւ երէկուայ երեկոյթը: Ինձ այսօր ասացին,  
որ շատ աջող ես երգել:

Մադլէնը գլխով լուռ շարժում արաւ:

—Իսկ ընդ հետ էլի ո՞վ է երգել:

—Ի՞նչ է որ,—արագ հարցրեց Մադլէնը:

—Չէ, դու ասա:

—Օրիորդ Ստեփանեանը:

—Ասում են, որ նա էլ վատ չի եղել...

Մադլէնը վեր թռաւ և կանգնեց՝ այնպիսի տան-  
ջուած դէմքով, որ հայրը հարցրեց.

—Ի՞նչ է, տեղ ես դնում:

—Ո՛չ մի տեղ:

Եւ տեսնելով թէ ինչպիսի ջղային շարժում արաւ  
Մադլէնը, հայրը աճապարեց կանխել նրան:

—Ի՞նչ անհանգիստ ես. տեսնում եմ:

—Ես ցաւում եմ, որ մեզուում դնահատել չգիտեմ...

Ստեփանեանն ոչ մի արժանիք չունի: Նա մի թոյլ լի-  
րիկ-սօսաբանօ է... երգելիս էլ ձայնը դողդողում է:

—Ի՞նչ անենք, բայց նա կարող է դուր եկած լի-  
նել: Նա ունի կապեր... Ես լսեցի նոյն իսկ աննպաստ  
կարծիքներ քո երգելու մասին: Կը նշանակէ՞ դու խամ  
ես գտնուել, այնպէս չես ժպտացել...

—Հայրիկ...

Մադլէնը հեռացաւ սեղանի մօտից այնպիսի շար-  
ժումով, որ կարծես պատրաստվում էր դուրս գալու:

—Այդպէս է, նեղանում է, երբ մեր կեանքի  
ճշգրիտ գոյներն եմ ցոյց տալիս:

—Ի՞նչ կարծում էք՝ իմ վիճակը չե՞մ կարող  
տնօրինել: Ուզում էք. երկու տարուց ես պատրաստ  
եմ ընմի համար: Հասկանում էք, մնում է, որ մի  
«այո» ասեմ: Արտիստականը խոստանում է... Կարծում  
էք դժուար է: Հայրիկն է, որ չի հաւատում իմ ոյժե-  
րին... Հն-հն-հն...

Տրամադրութիւնները փոխուեցին: Այլ ևս ոչ  
մինը նրանցից համամիտ չէր կատակներ անելու:  
Միայն Իվան Պետրովիչը մօտեցաւ Մադլէնին, նայեց  
նրա աչքերին... Հասկացաւ, որ նրան վերաւորել են:  
Դրանք մարդիկ չեն, գազաններ են: Սկսնակ տաղան-  
դին պատրաստ են խեղդել:

Մադլէնն ընկաւ տենդային դողի մէջ: Նա խնա-  
յում է հօրը, զգացուած է Իվան Պետրովիչի վերաբեր-  
մունքից... Բայց դրանց վիշտ պատճառողը նա ինքն  
է՝ իր ցնորամիտ տենչերով: Մտնէ մի պաշտօնի, մո-  
ռանայ երգը և արուեստը... Բայց այդ վերաբերմունքը  
նրան շատ է վերաւորում: Ասէ՞ արդեօք այդ իր մեր-  
ձաւորներին... Ո՛չ, ո՛չ, աւելի կը վերաւորուեն և  
սրանք... Թող ինքը կսկծէ... Բայց նա չի հանգստա-  
նում: Ուզում է անտես անել... Սակայն երաշխաւօր է,  
որ այն առաջարկի առաջ նա էլի երբեքից կանգնած  
չի լինելու ձակատ առ ձակատ...

Իվան Պետրովիչը շարունակ ձգտում էր ցրել  
տխուր տպաւորութիւնը, այդ պատճառով նա խօսքը  
փոխեց:

—Գիտե՞ս ինչ է ասում իմ կինը: Ասում է՝ ոչ  
էիր սովորել կլարնետը... Ուզում է, որ գլխարկներ  
կարեմ... Նա մինչև օրս, եթէ ճիշտն ասեմ, ինձ չի  
սիրում հէնց նրա համար, որ կլարնետ եմ ածում...

Մադլէնը լուռ հառաչեց:

—Ի՞նչ կարծում ես՝ այդ ինձ վշտացնում է... Ես  
աւելի շուտ կնկաս կը թողնեմ, բայց կլարնետս չեմ  
ցած դնի:

Մադլէնը շտկուեց ամբողջ հասակով:

—Նա ասում է՝ «ինչիս երաժիշտն ես»... Ի՞նչ ա-  
նեմ. ինձ ուսում չեն տուել. սրան էլ փառք... Բայց  
ես սիրում եմ իմ գործիքը... Երաժիշտը սրտով պիտի

միշտ մնայ երաժիշտ... Ես նրա ասածները սրտիս չեմ  
առնում: Մարդկանց մեծ մասը երաժշտութեան մասին  
այնպէս է դատում, ինչպէս իմ կնիկը... Բայց ես ի-  
րանց ասածը չեմ: Ես իմ կլարնետի ազատ տէրն եմ:  
Ախ, մի ձեռք բերեմ B և A կլարնետները, ես դրանց  
հետ այն ժամանակ կը խօսեմ...

— Դու էլ ոգևորուիր պատանու նման, — կցեց  
Սարգիսը. — մի ժամանակ ասում էիր՝ «ծխելա թող-  
նում եմ և այդ փողն էլ յետ եմ գցում»...

— Եւ յետ կը գցեմ:

— Յետոյ էլ կլարնետ կը դնես...

— Եւ կը գնեմ: Այ մի երկու ամիս անցնէ՛ B  
կլարնետը անսպասան կունենամ: Առանց A-ի գեռ բիչ  
եօլա կերթամ, բայց B-ն... կը գնեմ...

— Ե՞րբ:

— Դու՛ ասենք՝ անհաւատ թոմասն ես... Կը գնեմ:  
Աստուած վկայ՝ կը գնեմ:

— Մի տարի է, որ այդ լսում եմ:

— Ի՞նչ անենք, էլի մի տարի կը սպասեմ: 11  
բուբլի արդէն հաւաքած ունեմ... Մի վախենար, Մադ-  
լէն, թէ չէ... Վախեցար, գերեզմանիդ մօտեցար: Իսկ  
ես... եթէ մեռայ էլ՝ կլարնետը ձեռիս կը մեռնեմ...  
Դրա ձայները իմ հոգիս են... Ապա, Մադլէն ջան,  
դու դրանց մի լսիր... մի երգէ, լսեմ... Ինձ հետ...  
Ինձ հետ...

Նա վերցրեց կլարնետը և փորձեց փչել «Ո՛հ, ինչ  
անոյշ»-ը, բայց դուրս եկաւ մի խուլ դիսսօնանս...

Հայրը ծիծաղեց, սակայն Մադլէնն աւելի կուչ  
եկաւ:

— Ձեմ կարողանում: Հայկական երգերը չեն դուրս  
գալի: Աղբեր, ո՛չ տակտ, ո՛չ եղանակ... Ես զարմանում  
եմ, Մադլէն, ինչպէս ես գլուխ հանում այդ երգերից:  
Դէ, վերցրու ջութակդ...

— Տրամադրութիւն չկայ:

— Է՛հ, թանգ ծախիր: Գիտեմ, գիտեմ, որ թատ-  
րօնի ջութակահարը իրան ծանր կը պահէ... Գիտե՞ս,  
Մադլէն, հայրիկդ մի զարմանալի մարդ է: Պատահում  
է՛ երեկոյթներում խնդրում են այս-ինչ վաւը նուա-  
գել, մէկ էլ տեսար՝ խրտնեց... Դրան պիտի տաս հան-  
գամանք, պայմաններ, տրամադրութիւն...

— Հայրիկը իրաւացի է: Ի՞նչպէս կարելի է աջ ու  
ձախ երգել...

— Ինչպէ՛ս, այ, այդպէս...

Նա վերցրեց կլարնետը, փչեց ինչ-որ պօրօնէզ:  
Մադլէնը, որքան էլ տխրութեամբ համակուած լինէր,  
չկարողացաւ զսպել իր ծիծաղը:

Իվան Պետրովիչը փչում էր ու փչում: Նրա փոք-  
րիկ ալեխառն միրուքը տմամբում էր կլարնետի տակ:  
Իսկ մագերը կարծես աւելի էին ծառանում այն ժամա-  
ակ, երբ Իվան Պետրովիչը մի ուժգին շնչով փչելով՝  
կլարնետը բարձրացնում էր գործիքի բերանը դէպի  
նվեր: Երեսի ամբողջ արտայայտութիւնն այդ ժամա-  
նակ փոխվում էր. յօնքերը վեր էին քաշվում, աչքի  
կոպերը բարձրանում, թշերը ուռչում, իջնում... Հայրը  
ծիծաղեց, ծափահարեց:

— Բայց դու Բէրլիօզի կեանքը կարդացե՛լ ես:

— Ձէ,—ասաց Իվան Պետրովիչը, ցած դնելով կը-  
լարնետը,—հիմա կը լսեմ. ասա տեսնեմ:

— Բէրլիօզը մի գիշեր իր մտածմունքի մէջ է լի-  
նում: Կինը լինում է հիւանդ, իսկ զրպանում մկները  
պարելիս... Ահա այդ ժամանակ Բէրլիօզի գլխում յղա-  
նում է սիմֆօնիան: Սիմֆօնիայի մեծ մասը՝ յա-  
նօրի արկղերն արդէն կազմակերպվում է գլխում: Մարդը  
շտապ վեր է կենում անկողնից, որ գրէ: Յանկարծ  
կանգնում է. մի փիլիսոփայական միտք է գալիս  
գլուխը. «Եթէ այդ մասը գրեմ, չեմ կարող թողնել  
կիսատ ամբողջ գործը, կուզեմ որ վերջացնեմ ամբողջ  
սիմֆօնիան. իսկ այդ աշխատանքի համար կարևոր կը

լինի 3—4 ամիս... Բոլոր այդ ժամանակ ուրիշ ոչինչ չպիտի գրեմ, ուստի և զրկուեմ օրապահիկից: Իսկ վերջացնեմ թէ չէ, չեմ կարող չտարուել տպագրական խնդրով (իսկ այդ գործը կը կլանէ 1000 կամ 1200 Քրանկ), յետոյ կուզեմ, որ սիմֆօնիան նուագուի որևէ համերգում, մինչդեռ համերգի մուտքը հազիւ ծածկէ ծախսի կէսը. այդ դէպքում ես կընկնեմ պարտքերի տակ, ուստի չեմ կարող բժշկել իմ հիւանդ կնոջը. ընտանիքի ծախսերի մասին էլ չեմ խօսում...»: Խեղճը այդ հաշիւներէց դողի մէջ է ընկնում... Գրիչը դէն է գցում... Միտքը երկար տանջում է նրան, բայց Բէրլիօզը զսպում է իրան, պառկում է քնելու, իսկ առաւօտը սիմֆօնիայի հետքը անգամ չի մնում գլխում...

—Սակայն այդ հոգսերը չարգելեցին Բէրլիօզին գրել իր «Փառուստի մեղադրանքը», ինչպէս և Բալզակին՝ «Comédie humaine»-ը...

—Բայց և այնպէս ասուած էլ է «Primo vivere deinde philosophari», այսինքն «առաջ կեանքի խնդիրները, յետոյ փիլիսոփայական հարցերը»...

—Բայց սա քաղաքակրթուած բարբարոսութիւն է...

—Սակայն և այնպէս դա իրականութիւն է...

—Բայց ես ունէի իրաւունք Արտիստականի արուեստասէրներից աւելին պահանջելու... Ես ունէի իրաւունք սպասելու, որ այնտեղ մեզ աւելի կը հասկանան...

—Դու մեր իդէալիստն ես...

—Իսկ արուեստը, իսկական գեղեցկութիւնը, կարելի է քմահաճոյքների տակ զցել...

Նկատելով Մադլէնի բողոքող շարժումները, հայրը շարունակեց.

—Կարծում ես՝ նրանք ժխտում են արուեստը: Նրանք ընդունում են միայն այն չափով, որ արուեստը համապատասխանէ իրանց ճաշակին: Ես չէի ուզի քեզ

վիրաւորել, սակայն թափանցիւր խնդրի խորքը և տես, թէ ինչո՞ւ Ստեփանեանները թէև արուեստի խիստ պահանջներին գոհունակութիւն չեն տալի, բայց և այնպէս բաւականութիւն և հաճոյք են պատճառում մերոնց...

—Իսկ գաղափարը, գաղափարը... Պէտք է վերջապէս ըմբռնեն, որ արուեստը, կեանքի գեղեցկութիւնը, մի աստուած է, հիասքանչ ոյժ, որ նա անհրաժեշտ է մեզ համար. նա է, որ մարդուն պահում է վեհութեան սահմաններում, ընդգրկում է նրան ամբողջապէս: Պէտք է հասկանան, որ գեղեցիկը մի սաւառնոյ ոգի է, իսկ սաւառնոյ էակները չեն կարող իջնել նկուղները...

Սարգիսը նայեց ժամացոյցին և յանկարծ ընդհատեց:

—Այո, շատ հետաքրքրական նիւթ ես շօշափում, բայց ես կուշանամ թատրօնից: Իվան Պետրովիչ, կ'ացնիս քուի...

—Ի՞նչ գլուխս գովեմ, այդ նիւթի մասին խօսեալու շնորհք չունեմ...

Երբեմն-երբեմն, հօր հետ ունեցած մտքերի փոխանակութիւնից յետոյ, Մադլէնը խիստ տանջալից կերպով գալիս էր այն եզրակացութեան, որ նա կատարելապէս անգօր է իր նպատակներն իրագործելու: Նիւթականի կատարեալ բացակայութիւնը կամաց-կամաց հեռացնում էր նրան արուեստի աշխարհից:

Այս ինչ անխիղճներ են... Եւ ինչո՞ւ համար են խօսում արուեստի անունից: Սրանք են մեր արուեստագէտները... Ո՛չ, ո՛չ. Նստեցէք սրանց հետ մի անգամ ընթրիքի, շփուեցէք հետները, յետոյ ես ձեզ հետ կը խօսեմ: Ո՛չ, ո՛չ. դուք չէք կարող երևակայել: Նա ուզեց արուեստի անուան տակ խլել քո սիրտը, յա-

փշտակել քո հողին և ոտնահարել... Դիտե՛ն արդեօք, թէ ի՞նչ է կատարվում այս ոսկեգօծ պալատների մէջ, նրանց առանձնասենեակներում, թղթախաղի սեղանի առաջ... Բայց նա լուռ է, որովհետև միևնոյնն է՝ նրան շող ու հաւատացող չի լինի... Նա մօտեցաւ տուայէտի գեղանին, լցրեց բաժակը ջրով և յետ կանգնեց: Նրա գոքը սայթաքեց, քիչ մնաց ընկնէր յատակին...

Նրա աչքերը ընկան փունջին:

Չանազան ծաղիկների երփներանգ գոյները, նըրանց խաղերը, անոյշ բոյրը շոյեցին Մադլէնի հոտոտելիքը, մի վայրկեան այնպիսի ազդեցութիւն գործեցին, որ Մադլէնը շանթուեց: Նա երբէք այդպէս չի արբել ծաղիկների բոյրից... Նա զսպեց իր մէջ բարձրացող յուզմունքը և, կամենալով մոռացուեցան տալ փունջի հետ շողկապուած յիշողութիւնները, ուղեց իր ձեռքն աննել և հոտոտել... Սարսափի մի ճիշ թուաւ նրա շրթունքներից... Այդ փունջը... Դա նրա առաջին նուէրն է: Բայց դրա մէջ օձը թոյն է գրել:

«Տոյցիւրից զգուշացէք, օրիորդ, եթէ ո՛չ ձեր պատիւը կը շօշափէք»:

Նա լռեց:

Շատ ծանր էր... Նայել այդ փունջին...

Բայց և այնպէս նա ստացել է իր արժանիքների համար... Եւ որքան թանգ գնով է ձեռք բերել նա այդ արժանիքները... Նա կուզէր, որ այդ ձայնը մի անգամից կորցնէր: Բայց...

«Երբ առաջին անգամ երգեցի, հօրս երանի տուին. օ, նա այդպիսի աղջիկ ունի. և ինչպէս էր հոգում խեղճ հայրս...»

«Տես, չմրսես, ձայնդ չկորցնես...»

«Իսկ հիմա հայրիկն աշխատում է համոզել—ճիշտ է խիստ զգուշօրէն—որ թողնեմ երգը, որ արուեստը նրան էլ թշուառացրեց, որ նրա ընկերները արուեստից հեռու են՝ մին քահանայ է, միւսը հաշուապահ,

քայց այժմ ապահով կացութեան տէրեր, իսկ ինքը ընդունեց արուեստի ճանապարհը և այժմ չի կարողանում իր աղջկայ ընդունակութիւնները զարգացնել: Այժմ պէտք է մուրալ... Թշուառներ, խրտուիլակներ... Դուք ուզում էք խեղդել սաւառնող օդին... Եւ այս փունջը տուել էք ինձ՝ իբրև իմ տաղանդի վարձատրութիւն... Դուք բրբջում էք.. Ատում եմ ձեզ...»:

Նրա մէջ բռնկեց ամբողջ հուժկունը, կարծես քամու մի ուժգին հարուած տակն ու վրայ արաւ նրա սիրտը:

Նա վերցրեց փունջը և ուժգին թափով գցեց յատակին:

Լսուեց մի խուլ հարուած, իսկ բաժակը շուռ եկաւ, ջուրը թափուեց սեղանի վրայ սեղանի ամբողջ տարածութեամբ և թրջեց սփռոցը:

Մի վայրկեան Մադլէնը նայեց փնջին, հատ-հատ թափուած տերևներին: Սակայն փունջը չէր քանդուել: Մադլէնն աւելի բռնկեց.

— Ամուր է փունջը, ինչպէս սրա նուիրողի ձակատը... Հն-հն-հն... Բայց և այնպէս նա իմ ոտքի տակ է... նա իմ ոտքի տակ է...

Գլուխ Զ.

Ամառուան շոգերը մեղմացան. խեղդող տօթալից օրերը զգալի կերպով կարճացան:

Իերասանական խմբերը, երգիչները արդէն վերադառնում են զաւառներից: Գօլօլինսկիի վրայ ամառուան դատարկութիւնը տեղի է տուել կենդանութեան: Նա նորից կենդանացել է, զուարթացել... Այս-

տեղ են պատահում մարդիկ խիստ սիրալիր ողջոյններով, երբեմն իսկ կարօտով: Մաղլէնը նոյնպէս այստեղ է: Նա նոր է վերադարձել հայաշատ գաւառից, որտեղ գնացել էր յայտնի երգիչներից մէկի հետ համերգներ տալու:

Ինչո՞ւ նա գնաց գաւառ, պարզ է. բայց ի՞նչ տուաւ գաւառը, այդ Մաղլէնը չգիտէ... Նրան սովորական կերպով սիրալիր ընդունեցին, գովեցին... չքնասուեցին, ճանապարհածախսը հանեցին: Ասացին՝ «անաջող ժամանակ էք եկել, ամառները ամենքը ցրվում են»... Նա ուզեց գնալ Մանգլիս, հարուստների իջևանը, բայց չգնաց: Նա լսեց, որ օր. Ստեփանեանն եղել է արդէն այնտեղ, համերգ է տուել և այնքան դո՛ւ են մնացել, որ խոստացել են ուղարկել կօնսերվատօրիա: Թող լինի... Իր բախտն է... Ի՞նչ անէ Մաղլէնը, որ Ստեփանեանն աւելի բախտաւոր է... Իսկ իրան գաւառն էլ յոյս չտուաւ... Ինչ ուզում էք ասէք, նա առաջուան հաւատը չունի:

Նրա տրամադրութեան մէջ առաջ է եկել հիասթափում, կասկածանք, թմրածութիւն և մեռելային անտարբերութիւն... Եւ մինչև Ե՛րբ յուսայ:

Նա արագացրեց քայլերը, կամեցաւ մտնել ծանօթ ընկերուհիներից մէկի տունը, Իսկ գլխի մէջ կուտակուած մտքերը հանգիստ չէին տալիս:

Բայց ինչպէս նա հաւատացած էր, որ տաղանդը չի կորչի: Սո՛ւտ է. տաղանդի գնահատումը պայմանաւորուած է քմահաճոյքով:

Բայց անա և Ստեփանեանը:

Ո՛չ, Մաղլէնը կունենայ քաջութիւն, կը գնայ դէպի նա:

Եւ հպարտ-հպարտ քայլեց, յառեց աչքերը առաջ: Նա տեսնում է Ստեփանեանին. օ, նա գալիս է թևանցուկ նոյն նախագահի հետ, որ իրան առաջին փունջն էր տուել...

Այո, նա է. նա ճանաչում է այդ մարդուն գլուխը թեքելուց, սիրատենչ հայեացքներից... Բայց, Տէ՛ր Աստուած, ինչպէ՛ս նա ուշադիր է դէպի Ստեփանեանը:

Գալիս են շատ հաստատ քայլերով, իսկ օրիորդի թշերը վառվում են: Ստեփանեանի ժպիտը սովորականից աւելի գրաւիչ է: Ըստ երևոյթին, նա նախագահից ՝ բացի մարդ չի տեսնում: Նո՛ւ, ասացէք, ճն... Նա և՛ մաղերի սանրուածքն է փոխել, յունական սանրուածքի ձև է տուել մաղերին, գլխարկն էլ խիստ պիկանտ է. ճիշտ է, քիչ նիհարել է, բայց այդ դալուկ դէմքը նրան աւելի է սաղ գալի: Անցաւ Մաղլէնի մօտով, մինչև անգամ չնայեց: Չտեսաւ. զուցէ չուզեց տեսնել... Ո՛չ, նա աւել չի կարողանում նայել, սիրտը կտոր-կտոր է լինում: Կերթայ, որևէ պաշտօն կը գտնէ... Նա կը գտնէ դասեր... Նա կը ստանձնէ ինչ պաշտօն ուզում է լինի, հասկանձում էք, վերջապէս, ապրել է հարկաւոր, հօր շինքին քանի՛ նստի... «Primo vivere, deinde philosophari»... Ճիշտ չէ՞ր ասում հայրը... Կանցնի մի երկու տարի, դասերն յաճախելուց, փոշին կլանելուց ի՞նչ կը լինի... Գուցէ նոր ասպարիզում մկն էլ կառաջարկէ իր պատրաստականութիւնը, կը խնդրէ նրա ձեռքը... Ամեն ինչ սպասելի է... ի՞նչ կայ. այդ տեսակ օրիորդները իրանից պակաս են:

Քիչ էլ անցաւ և պատահեց իր տաղանդի երկրպագուներից մէկին:

— Ե՛րբ էք եկել, օրիորդ:

— Չորրորդ օրն է:

— Այդ ի՞նչ է, ձեր համերգը գաւառում աջող չի՞ անցել: Այսօր ստացանք այդ գաւառական լրագիրը...

— Ի՞նչ են գրում:

— Մի խայտառակ բան... Էլ ձայն չունէք, անշնորհք է, հոգեկան զգայմունքներից զուրկ էք, և մինչև

անգամ ձեր համերգը համարում է շանտաժ և հարըստահարութիւն...

— Ի՞նչ էք ասում: Ի՞նչ է ստորագրած:

— «Դիտող»:

Սառը քրտինքը պատեց Մազլէնին. նա դողաց ամբողջ մարմնով: Մազլէնը գիտէր, որ Դիտողը այնտեղի երգեցողութեան ուսուցիչն է. Մազլէնին առաջարկում էին երգեցողութեան դասեր, և Դիտողը վախենում էր իր տեղից:

Գրեթէ անսկասելի կերպով Մազլէնը հարցրեց.

— Ասում էք՝ գրել է:

— Մինչև անգամ այստեղի թերթերից մէկին էլ է ուղարկած թղթակցութիւն...

— Այո՞... և տպելով են...

Սակայն բարեկամ ձայնը կարիկցաբար ասաց.

— Ո՛չ: Մեր իրականութիւնն է, ուշադրութեան մի առնէր:

Ստեփանեանը նորից վերագառնում է:

— Այդ երգչուհուն ճանաչում էք:

— Ինչպէս չէ,— ասաց բարեկամ ձայնը,— իր բարերարի հետ է գալիս:

— Իր բարերարի՞...

Մազլէնը նորից դողաց ամբողջ մարմնով:

— Մթթէ չէք կարդացել լրագրում: Այո, սա է, որ ուղարկում է օրիորդին Իտալիա:

Բայց սա այն նախագահն է, որը իր պատրաստականութիւնն էր առաջարկել Մազլէնին...

Մազլէնը ոչինչ չասաց. ինքնամոռացութեան մէջ՝ նա մի թոյլ խղճալի ժպիտով բաժանուեց բարեկամից և դանդաղ քայլերով հեռացաւ Գօլօվինսկիից:

Թիֆլիսի սարերի լանջերի վրայ որքան վառ ճրագներ... Գիշերը արդէն իջել է լեռների վրայ. փողոցում աղմուկն ետում է: Շուրջը հեզում էր Մազլէնին և դառն հեզում: Դու ցանկանում ես քո ուզածի պէս տնօրինել քո կեանքը, բայց հարցրել ես մեզանից: Իսկ որ մենք ուզում ենք ծծել քո հիւթերը, քամիլ քո գեղեցկութիւնը, ճմլել քո մարմինը, առնել նրա բոյրը, այդ մեր իրաւունքն է. և դու հակադրում ես քո սեփական քմահաճոյքը: Յանդուգն... Դու մի երաժշտի աղջիկ... Դառն և թունալից ատելութիւն ժայթքեց նրա բերանից: Անիծուի այն արուեստը, որ պիտի զարգանայ և աճի ներկայի գնահատումներէ շնորհիւ: Անիծուի այն հասարակութիւնը, որ գեղեցիկը աճեցնելու և զարգացնելու համար փող և ստրկութիւն է պահանջում. այն շրջանը, որի մէջ լայն մասսաները չեն կարողանում փափկացնել իրանց բարքերը, կրքերը և որի շնորհիւ հազարաւոր սրտեր կարծրանում են, բթանում, խորթանում աստուածային կրակից: Անիծուեն այն ձեռները, որոնք նիգեր են դնում արուեստի տաճարի գոնների վրայ, տատասկ ու քար են ցանում այն ճանապարհի վրայ, որով պիտի գայ մասսան գէպի սրբազան տաճարը: Բոլոր այդ կեղծ արուեստատէրները, քսու երկրպագուները, ծախու տաղանդները, բռնաբարուած կամքերը կորչեն, կորչեն, կորչեն... Կորչի դարաւոր կաստայական տաճարը, որտեղից տարի-տարիներով դուրս են շարժուում իսկական տաղանդները, անկեղծ գէմքերը և խրախուսանք գտնում ակնաւուրդէմքեր, անհատական քմահաճոյքներ... Կորչի նոյն իսկ այգալիսի կեանքը:

...Նա մօտենում է յետ ընկած թաղերին, իր տան մօտ: Ծրագները կորցնում են իրանց փայլը, ժարգիկ աւելի քիչ են պատահում: Տղեղ մայթեր, անշուք տներ, կուշ եկած խանութներ, թթուած գէմքեր... բոլորից, բոլորից փչում էր մի մեռած կեանք:

MB

անտարբեր հոգի, յոգնած շարժումներ...

Նա ցնցուեց:

Ինքն էլ նոյն շարքերից է, նոյն մեռածներից...

Անտանելի յուզմունքից նա լցուեց խոր առեւտրութեամբ:

Տան դարպասների մօտ շարուել էին, նստոտել էին իրանց բակի տնկիցները. անխօս, լուռ, աննպատակ նայում էին ցած, դիմացի տներին... Նայում էին... նայում էին... անմիտ, բթացած հայեացքներով... Ձուր չի ասում հայրը, որ այդ մեռածներն են, որ թիկն ու նեցուկ են տալիս այն հասարակութեան, որ պաշտպանում է կեանքի թերատ երևոյթները: Սրանք նոյն իսկ ճանապարհ չտուին, և Մադլենը լուր սուլաւ նրանց կողքից և երկիւղած մտաւ բակը:

Պարս է.

Ի՞նչ սքանչելի է ժպտում արեւը այսօր: Այդպէս է այստեղ թիֆլիսում նոյն իսկ դեկտեմբերին՝ ջերմ, տաք արև, շոյող, փաղաքշող...

Սքանչելի է:

Ժպտում է ամբողջ երկինքը, անսահման, կապուտակ երկինքը սպիտակ, պատառոտուն, ցիրուցան ամպերով: Իսկ այնտեղ, զէնիթում, գմբէթաձև տարածութիւնը աւելի է խորանում, կապոյտ անսահմանութիւնը, անթափանց և խորհրդաւոր անհունութիւնը խորանում է, փաղաքշում է, խոր մտածմունքներ ծնեցնում. նա լուռ քաշում է մարդու հայեացքը, բեռում ուշադրութիւնը, իսկ արեգակի շոյիչ ճառագայթները խառնուելով այդ կապոյտի հետ՝ վառվում են ցայտուն ցուրբերով, շողուն ճաճանչներով. նրանք կենդանացնում

են, տաքացնում, սրտի ծալքերում ծնեցնում խորհրդաւոր ներշնչումներ:

Եւ այսօր նամանաւանդ մի այդպիսի օր է բացուել: Ամեն ինչ ժպտում է...

Մադլենը բացեց տան դուռը: Մ, ի՞նչ հրաշալի է: Նա հագնուել է, թէյից վեր կացել և դեռ ուշ էլ չէ, առաւօտեան 10 ժամ է:

Մի շատ մեղմ քամի փչում է հեռու լեռներից: Օդի շարժումը ամրացնում է նեարգերը, առջ է բերում սրտի մէջ ինչ-որ նորագոյն թրթիռ և յետոյ, ինչպէս վախեցած թռչուն, յանկարծ ուժեղացնում է հարուածը և կորչում՝ առանց որոշելու իր ուղին. ապա նորանոր հոսանքները նորից կորչում են, քիչ յետոյ ուժասպառ կեռման իջնում են սարից և սուզվում են քաղաքի մէջ... Եւ այդպէս նորից ու նորից կրկնում են իրանց ընթացքը:

Եւ հրաշալի գրաւչութիւն է բերում: Եւ երևակայութեան մէջ նկարվում են նոր գոյներ... Այն, որքան էլ անախորժութիւններով հարուստ լինի կեանքը, այս անընդհատ կատակերգութեան մէջ անգամ սկիզբ են առնում մշտնջենական գեղեցկութեան սահմանները. ներդաշնակ կեանքի հրաւերները:

Հրաւեր...

Եւ Մադլենի միտքը կանգ առաւ այդ կէտի վրայ: Ընկերուհին էլ նոյնն է ասում: Կեանքը հրաւիրում է, և այդ հրաւերը պահանջում է մարտնչել կեանքի սև կողմերի դէմ այնպէս, ինչպէս արեգակի ճառագայթները կոիւ են մղում խաւարի դէմ:

Եւ գիտէ՞ք ո՞վ շարժեց նրա մէջ զօրեղ կերպով այդ ինքնաճանաչութիւնը, այդպէս ասած՝ կազմակերպեց նրա գիտակցութիւնը... Կատիան:

Իայց հետաքրքրական է իրօք... Նա ասում է, որպէսզի կեանքը վերանորոգուի և աւելի արագ թափով դնայ, կուռին պէտք է մասնակցեն ինտելիգենտ

Մ

բոլոր ոյժերը: Եւ նա այնպէս համոզեցուցիչ է խօսում ամեն անգամ: Շուտով, շուտով գար. Կատիան ամեն օր այցելում է և ինչ զարմանալի մտքեր է յայտնում: Բայց դուք գիտէք Կատիային: Ռուս է, սակայն լաւագոյն ուսաներից է: Նա Մաղլէնի հետ միասին է աւարտել գիմնադիան: Փոզ ունէր, զնաց բարձրագոյն կուրսերը: Այժմ մայրաքաղաքի համալսարաններում ինչ-որ շարժումների շնորհիւ ուսանողուհիները ցրուել են գաւառները: Տօլստօյի մահուան առիթով է,—ասում է: Կատիան չափազանց փոխուել է. հիվ կասէ, որ նա ինչ-որ փայտավաճառի աղջիկ է: Նա հետաքրքրվում էր ինչ-որ վերագնահատումներով, ինչ-որ նոր արժէքներով... Նա կը համբուրէր այն մարդկանց, որոնք կոխ էին մղում յանուն իրաւունքի, ճշմարտութեան: Ընդհանուրի բարօրութեան, լոյսի և ազատութեան համար նա իր անձը չէր խնայի: Նա բոլորովին չի վշտանում. եթէ նոյն իսկ համալսարանի գոններն էլ նրա առաջ փակուեն: Մի շարաթ է, որ նա այստեղ է, և որքան նորանոր մտքեր է Կատիան հաղորդել...

Մաղլէնը յանկարծ վեր է թռչում: Ուրախութիւնն, ինչպէս մի կատաղի հեղեղ, ողողում է նրա սրտի բոլոր անկիւնները: Ականջների մէջ նորից զգում է ինչ-որ խշշոց: Կատիայի հերոսական խօսքերը պահում, ներշնչում են նրան ոգու արիութիւն: Նրան թւում է, որ այժմ շատ է թեթեւացել այն նախկին ցաւոտ վշտերից, որոնք կրծում էին մի ժամանակ նրա սիրտը:

— Դու շատ ես կպած թատրօնին, — ասում էր հայրը այսօր խիստ զգուշօրէն թէյի ժամանակ:

— Այժմ ո՛չ,— յոյլ, ալարկոտ կերպով պատասխանեց Մաղլէնը, չհոռացնելով աչքը բաժակից:

Ճիշտ է, նա քիչ կարմրեց, առնուեց, բայց հայրը այնու ամենայնիւ նկատեց, որ նա բոլորովին ճիշտ է ասում: Այրնոյ, այրնոյ մտքեր են գալիս այժմ նրա

զլուխը: Փոթորկում է շուրջը մի նոր կեանք, եռուն, բայց սպառնալից, բայց ուժեղ կերպով բարշտոյ: Թողնել այդ և կառչել նեղ-էստիտիքայի... Օ՛, ինչպիսի թշուառ, վերածնութեան խիստ կարօտ կեանքն էր նա անտես արել մինչև այդ... Թշուառութիւն, մշտական մրցում, կոխ, լարուած ջղեր, քուռ, ժպիտ՝ վերաբերմունք, կեղծիք... Եւ այդ բոլորից յետոյ մարդու խելքին կը նստէ ներկայի նեղ արուեստը:

Երէկ գիշեր, օրինակ, Ստեփանեանի նոր առաջին դերիւսն էր Իտալիայից վերադառնալուց յետոյ: Երգեց «Տրափատայի» մէջ... Մաղլէնը լսեց, բայց ներկայացումից այնու ամենայնիւ վերադարձաւ բաւականին թեթեւացած: Թատրօնից դուրս գալուց նրա ետեւից դեռ շարունակվում էին գողիւնները, օվասիօնները, նա շուռ էլ չեկաւ: Իսկ թատրօնից դուրս էին գալիս պճնադարդ տիկիւններ, փայլուն կոճակներ... և ո՛չ մի հասարակ մարդ, մասսայի, ժողովրդի զաւակ...

— Այժմ համոզուեցիք, — շեշտեց Կատիան:

Եւ ինչո՞ւ էր կասկածում Կատիան. կարծում էր, որ ես կը տատանուեմ:

Նա լի կրծքով կլանեց դրսի օդը:

Ո՛չ, Մաղլէնն ինքն իր գլխի տէրն է: Մեղադրել նրան դժուար է. նա կարողանում է խիստ հակադիր փաստեր բերել: Դատարկ, սին մտքեր: Մենք փայլում ենք մի գաղափար մինչև այն օրը, երբ չգիտենք նրանից աւելի բարձրը: Արուեստը, երգը պէտք է սիրել, բայց երբ այդ արուեստը, երգը բոլորի սեփականութիւն չէ, այլ մի ջնջին մասի, այդպիսի արուեստը չի կարող յուզել սիրտը:

Այդ միջոցին բակում տնկիցներից մէկը նուագեց դաշնամուրի վրայ: Մաղլէնը լարեց լսողութիւնը, բայց նրան չաջողուեց ըմբռնել: Բակում անտանելի աղմուկ էր. լուացարար կնոջ տան դուռը քամուց բացվում էր ու վրայ գալիս և անխնայօրէն ճուռում:

Յանկարծ այդ կինը բարկացաւ իր չորս տարեկան մանկան վրայ, ծեծեց նրան. երեխան ծուաց, մայրը նորից մի կոյտ յանդիմանութիւններ թափեց...

Մաղլէնին չէր աջողվում լսել նուազի քաղցրութիւնը: Ահա դարաւոր ստրկութեան արդիւնքը: Կեղծել, անտէս անել այդ իրականութիւնը, երբ այդքան բիրտ է այդ կնոջ նման հազարաւոր մարդկանց ճաշակը:

Օ՛, որքան գոհիկ է այդ կինը, նա ոչ միայն չէր ականջ դնում նուազը, այլ նոյն իսկ չէր լսում նրան: Որքան տգիտութիւն, խլութիւն դէպի երկնային ձայները... Կեանքի հիգրան այդ խեղճ մօր սրտից կլանել է բնութեան շքեղութիւնը և անզգայ դարձրել դէպի գեղեցիկը:

Եւ նա անցաւ իր սենեակը, մի րօպէ կանգ առաւ իր նօտաների առաջ, կկոցեց աչքերը՝ ինչպէս մի խիստ լոյսից: Յետոյ մի քննական հայեացքով դիտեց չորս կողմը: Այժմ անկասկած է: Թատրօնում պճնուած դէմքեր, իսկ դուրսը՝ խունացած կեանքի չորս պատի մէջ բիրտ սրտեր, խուլ ականջներ, անզգայ մայրեր, արուեստի ոչ մի հասկացողութիւն. գեղեցիկի կատարեալ բացակայութիւն... Եւ այդպէս էր երէկ... այդպէս է այսօր...

— Ո՛չ, արուեստը, թատրօնը պիտի նոր հիմքերի վրայ կառուցել...

Նա այլ եւ չի կարող մնալ ներկայ բեմի վրայ. նրա սիրտը յուզվում է նրա միակողմանիութիւնից: Կերթայ, կատիայի յիշած ասպարէզը մեծ է. Մաղլէնը կը գտնէ իր համար էլ գործ: Նա կընտրէ որևէ մասը. օրինակ՝ բանուորական շրջաններում նա կարող է խօսել, կարթնացնէ ճշմարտի, գեղեցիկի պահանջը նրանց մէջ...

Եթէ ոչ, ինչ է այդ լուացարարը: Մաղլէնը կանէ, հասկանում էք. բուն ժողովուրդը աղքատ է, տգէտ

է, գեղեցիկից զրկուած: Նրան պէտք է մասնակից անել արուեստին, թատրօնին: Նա շատ կաշխատէ, միայն թէ այդ մասսայի մէջ արթնացնէ ինքնագիտակցութիւնը, որ նա էլ ունի իրաւունք հաւասար չափով, ինչպէս փետրաւոր գլխարկներով յաճախողները, ունենալ իր հոգու անդորրութիւնը, իր թատրօնը... գեղեցկութիւնը ընդհանուրի սեփականութիւն պիտի լինի... Անպայման, անպայման...

Նա հստեց տախտի վրայ և ընկղմուեց խոր մտածմունքների մէջ: Մաղլէնը երկար ժամանակ լուռ էր: Ինչպիսի՞նք ճշմարտութեան առաջ բացուեցին նրա աչքերը: Մի՞թէ ողորմութիւնը, պնակալէզութիւնը աւելի լաւ էին, և ումից էր նա օգնութիւն սպասում...

Ո՛չ, նա աւելի շուտով այդ վիշտը կը տանէ, չի գրուի ստրուկ լոկ նրա համար, որ այդ միջոցով ձեռք բերէ բեմը: Նա իր ձեռները չի ուզում շղթայել, ի հարկէ, չի ուզում շղթայել. ինչ արած որ կասեն՝ «չկարողացաք»... այսինքն՝ քծնել, որսալ չկարողացաւ...

Մաղլէնը մի կողմ դրեց նօտայի թերթը: Տեսնում էք. նա խեղդում է յուզմունքը: Մաղլէն, ինչո՞ւ թողեցիք բեմը, ապագայ փառքը, ասացէք... Ախ, դուք շատ հիանալի երգչուհի կը դառնաք: Քո ձայնը կը շանթէ, քո ոտքերի առաջ կը բերէ հազարաւոր ստրուկներ: Տեսէք, ամենքը նրա շուրջն են, նրան շնորհաւորում են, թատրօնից ձեռքերի վրայ են տանում, նրան գգուանքներ են շոյլում. նա Աստուծոյ ձայնի թարգմանն է... Այդ ընդունելութիւնը ինքնամոռացութեան մէջ է գցում, փայլ է տալիս նրա երեսին, աչքերի ցոլքերը սաստկանում են... Նա երիտասարդ սրտերի գերողն է արդէն. և նա կուզէ՝ կընթանայ նրանց միջից, ինչպէս արեգակն երկնքի վրայով, կամ կը շոյէ ճաշակը, ինչպէս ծաղիկների բոյրը գարնանը դաշտում, կամ կը սփռի հայեացքը, ինչպէս խաղաղ ծովի կապոյտ մակերևոյթը անդորր ժամանակ, կամ ինչպէս

մեղմ զով քամին յոգնած ճակատը: Բոլոր հանդիսա-  
կանների ուշադրութիւնը նրա վրայ է բեկուռած:

Բայց անցաւ այդ մղձաւանջը:

Մաղիէն ընդունել է նոր հրաւերը: Ո՞ւր է նա  
գնում՝ գիտէ. կը հասնէ՞ նպատակին՝ այդ հետաքրքրա-  
կան չէ. միայն նա կանչէ այն, ինչ որ անուժ եմ կեան-  
քի վերածնութեան համար ապագայի մարդիկ:

Անցածը անցած է: Տէրը նրանց հետ Ստեփա-  
նեանը գնաց և ծառայագրուեց ներկայ բուրժուական  
բեմին. թող. նա այդպէս է համոզուած:

Նրա ձայնը երերաց, աչքն ընկաւ հայելուն, նկա-  
տեց, որ շատ է սպրդնել:

Նա իսկոյն հեռացաւ հայելուց, կամենալով չվեր-  
յիշել անցածը: Բայց այդ միջոցին աչքն ընկաւ պօսու-  
քարտերին:

— Չայկովսկի. Էքստազի երգիչ, հրաժշտական  
արուեստի տարերային էութեան զարմանալի բնորոշող  
և որքան ուժեղ... այրող, ուժգին էքստազ քո մէջ.  
Ինչպէս մրրիկի մի հարուած գալիս ես մարդու վրայ  
և նրա հոգու մէջ ծնեցնում դրախտային երջանկու-  
թիւն:

— Իսկ դու, — աչքը գցեց Սկրեպինի նկարին, —  
արտայայտեցիր կամք, նախաձեռնութիւն, կռուի և  
սրտի թնդիւն, խուլ տրտունջ և ուժգին ոգևորութիւն:  
«Աստուածային պօէմադ», անհատի էքստազի արտա-  
յայտիչը, ամփոփել է իր մէջ յեղափոխիչ կայմակներ...  
— Իու, Վագներ, հրաժշտական տրագիցիաների և  
հին ձևերի ջախջախող, չճանաչեցիր պատմութիւնը  
արուեստի մէջ... քո «Rein menschliches»-ը...

Նա զսպեց իր շունչը, յետոյ նորից աչքը գցեց  
այլ պատկերների:

— Շոպէն, Շոպէն, մեյրօղիաների աստուածային  
մաքրութեան թարգման... Իո «Թաղման քայլերգ»...

Նա փակեց աչքերը, գլուխը խոնարհեց:

— Երևելի ստեղծագործողներ... Որքան հրաշալի  
ձայներ ստեղծեցին: Ի՛նչպէս չժօտենալ, չպաշտել, յար-  
գանք չմատուցանել...

Նա միայն այս կտորը կերգէ և ուրիշ, երբէք,  
երբէք... Կուացաւ, վերցրեց նոտաներից «Թօսքայի ա-  
ղօթքը»... Ազահութեամբ կլանեց նրան: Չայնը ինք-  
նաբերաբար հնչեց... և նա իր շուրջը տեսնում է  
միայն ծափահարողներ...

Спе-нѣ и люб-ви по-свя-ша-ла жизнь

И ни-ко-му не дѣ-ла-ла зла!...

Мно-го у-крадкой горь-вихъ слезъ я о-су-ша-ла...

Съ вѣ-рой мо-я мо-лит-ва, мо-я мо-лит-ва

Къ Все-выш-не-му всег-да бы-ла.

И съ вѣ-рой у-кра-ша-ла ал-тарь цвѣ-та-ми...

За что, ска-жи, о Бо-же, стра-да-ю я, за что-же?

За что, мой Богъ, о-ста-виль ты меня?

Նա կտրեց ձայնը, շուռ եկաւ: Նրա ետև կանդ-  
նած էին կատիան և հայրը:

— Մաղիէն, խանգարեցի՞... Մենք չէինք ուզում  
ընդհատել... Նորութիւն քեզ հաղորդեմ. Բազում տըն-  
տեսական գործադուլ է, ես գնում եմ դրդապատճառ-  
ներն ուսումնասիրելու... Իո խնդրած տեղն էլ քաղա-  
քային վարչութեան մէջ յատկացուած է... Գալիս ես,  
թէ՞ միտքդ փոխել ես...

— Ե՞ս. ո՛չ, ո՛չ... Գալիս եմ, գալիս եմ... Ես ու-  
զում եմ ապրել, ուզում եմ գործել. հասկան՞ում էք...

(Վ. Ե. Չ)



ՀՈՅՍ ՏԵՍԱԾ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ ի պ ա կ ա ն

- 1) Կոտրուած ուրտ, վէպ 170 եր. (սպառ.) գ. 40 կ.
- 2) Մեռած ծովուն, վէպ 390 երես (սպառ.) գ. 1 ռ.
- 3) Հարագատ զձեր, (պատկեր.) (սպառ.) գինը 15 կ.
- 4) Խրամատի առաջ, վէպ, տպ. 1905 թ. «Բաղ-  
մավէպի № № 1—2-ում»:
- 5) «Խոռովարկոններ», վէպ 88 եր. (սպառ.) գ. 25 կ.
- 6) Ո՞վ է նա, պատկ. (սպառ.) գ. . . . . 5 կ.
- 7) Ղօնադրուդս մնաց, Վօղըվիլ 1 աբ. Բ. տպագ.  
(սպառուած) գ. . . . . 20 կ.
- 8) Սաւառնող ոգին, վէպ գ. . . . . 40 կ.

Մ ա ն կ ա կ ա ն

- 1) Կեանքի պահանջը, տպ. 1902 «Աղբիւրի» № 9—12.
- 2) Բանուորի գիրքը, տպ. 1907 «Աղբիւրի» № 5—6.
- 3) Վարագոյրի ետեւում, տպ. 1908 թ. «Աղբիւրի»  
№ 2—3:
- 4) «Ծուղրուդո» 1909 թ. «Աղբիւրի» № 7—8 և  
առանձին (սպառուած) գինը . . . . . 15 կ.
- 5) «Իոնք ինն ջէք սիրում», 1909 «Աղբիւրի» № 9.
- 6) Պատուհասի առաջ, 1910 «Աղբիւրի» № 2.
- ✓ 7) Բեծինի մարգը, թարգմ. Տուրգենեվից 1911 թ.  
«Աղբիւրի» № 4.
- 8) «Ես տիկին ունիմ...» «Աղբիւրի» № 1, և ա-  
ռանձին գրքով գ. . . . . 10 կ.

Քննադատական

- 1) Ժամանակակից հայ քնարերգութեան փիլիսո-  
փայութիւնը գ. . . . . 50 կ.

Հոյս են տեսել «ԱՐՐ» ամսագրի հրատարակութեամբ հետևեալ գրքերը

1) Մի հնչիւնից մի գիր, Ստ. Մալխասեանցի, գինը	20 կ.
2) Հայաստանի երբեմն եւ այժմ, Լեման Հաուպտի, թարգմ. Իս. Յարութիւնեանի, գինը	20 կ.
3) Ասացուածներ Մառոմէդի, ընտրուած Լ. Ն. Տօլստօյի ձեռքով, թարգմ. Լ. Գանիէլեանի, գինը	5 կ.
4) Կօնճաղիս, կազմեց Պ. Ա. Բուլանովէ, իմը. Լ. Ն. Տօլստօյի, թարգմ. Սուրբաթեանի, գինը	7 կ.
5) Ճորտերի ազատագրութեան յիսնամեակը, գինը.	15 կ.
✓ 6) Խոսովանութիւնը, Լ. Ն. Տօլստօյի, թարգմանութ. Սուրբաթեանի, գինը.	30 կ.
7) Իննսուն երեքը, մեծ վէպ վիկտոր Հիւգօյի, թարգմ. Ա. Սաֆարեանի գինը.	1 ր. 50 կ.
8) Եւանջիլածներ, պիէս 3 գործ., Այ. Աբէլեանի գ.	67 կ.
9) Մաւանդ ոգին, վէպ Յովակիմ Սօլովեանի, գ.	40 կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0360796

55657

